

**ԱՌՕՐՅԱԽ ԽՈՍՔԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայ լեզվաբանական գիտության մեջ առօրյա խոսքը (ավելի տարածված՝ խոսակցական լեզուն) գրեթե շուտամասիրված բնագավառներից է, թերևս ամենից քիչ ուսումնասիրված բնագավառը: Նման իրավիճակը կարելի է բացատրել մի շարք ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով: Նշենք դրանցից առավել կարևորները:

ա) Հայ քերականագիտության սկզբնավորումից մինչև մեր օրերը լեզվաբանները հիմնականում զբաղվել են գրական լեզվի օրինաչափությունների ու առանձնահատկությունների բացահայտմամբ, նրանց ուշադրության կենտրոնում է եղել գրական լեզվի տարբեր երևույթների հետազոտումը, իսկ խոսակցական լեզուն կարծես թե մատնվել է անուշադրության, մնացել ստվերում:

բ) խոսակցական լեզվի համակողմանի և ճշգրիտ բացատրությունը գրեթե անհնարին է առանց տեխնիկական մի շարք միջոցների ու սարքերի առկայության, այսինքն խոսակցական լեզվի ուսումնասիրությունը կապված է նաև տեխնիկական որոշակի դժվարությունների հաղթահարման հետ, իսկ այդ հարցը դրականորեն լուծվեց միայն մեր դարի երկրորդ կեսի սկզբներին:

գ) խոսակցական լեզվի քիչ ուսումնասիրված լինելու գործում մեծ նշանակություն ունի նաև այն, որ մինչև այժմ էլ դեռևս չկա գիտական միասնական տեսակետ լեզվում նրա տեղի ու դիրքի, նրա բնորոշ հատկությունների ու առանձնահատուկ գծերի վերաբերյալ: Կոնկրետ ճշգրտված չեն խոսակցական լեզվի սահմանները, տարբեր լեզվաբանների կողմից առաջադրված են նրա տարբեր ըմբռնումներ: Հենց ինքը՝ «խոսակցական լեզու» տերմինը բավական առաձգական է և տարանշանակ:

դ) Կա նաև հարցի մյուս կողմը. ի տարբերություն գրական լեզվի, խոսակցական լեզուն ուսումնասիրողների առջև ծառանում են մի շարք նոր խնդիրներ՝ պայմանավորված խոսակցական լեզվի առանձնահատկություններով: Առանց այս հանգամանքը հաշվի առնելու հնարավոր

շէ կատարել խոսակցական լեզվի ուսումնասիրութիւն՝ նրա նկատմամբ մեխանիկորեն կիրառելով գրական լեզվի ուսումնասիրութեան տեսական ու գործնական մեթոդները:

Ամենից առաջ պիտի նկատի ունենալ խոսակցական լեզվի գործառութեան պայմանները. գրական լեզվի ուսումնասիրութեան դեպքում արտալեզվական գործոնները գրեթէ դուրս են մնում լեզվաբանների տեսադաշտից, նրանց հիմնական նպատակը բուն լեզվական հատկանիշներէ, ընդհանուր օրինաչափութիւնների ու մասնավոր դրսևորումների բացահայտումն ու վերլուծութիւնն է: Մինչդեռ խոսակցական լեզվի շատ առանձնահատկութիւններ բխում են հենց արտալեզվական գործոններից: Այս պատճառով էլ շատ կարեւոր են դառնում այդ արտալեզվական գործոնների, հատկանիշների ուսումնասիրութիւնը, խոսակցական լեզվի ընտրութեան, կառուցվածքի, ժանրային դրսևորումների վրա ունեցած դրանց ազդեցութեան բացահայտումը, դրանց հետ սերտորեն կապված լեզվական տարբեր իրողութիւնների վերլուծութիւնը:

Ընդհանուր ճանաչում է գտել այն տեսակետը, ըստ որի խոսակցական լեզվի ընտրութիւնը պայմանավորված է արտալեզվական երեք հիմնական գործոններով: Դրանք են.

1. Հաղորդակցական ակտի անպատրաստութիւնը,
 2. Հաղորդակցական ակտի անկաշկանդութիւնը, ինքնակայութիւնը, այսինքն՝ ոչ պաշտոնական բնույթը,
 3. Խոսակիցների անմիջական մասնակցութիւնը հաղորդակցմանը:
- Սրանք այն հատկանիշներն են, որոնց առկայութեան պայմաններում հաղորդակցումը կարող է իրականացվել խոսակցական լեզվով:

Այս հատկանիշներն, իհարկէ, հավասարաբեռն չեն: Գրական լեզվի որոշ դրսևորումներ նույնպէս կարող են ունենալ անպատրաստութեան հատկանիշներ, տարբեր (հանպատրաստից ելույթ, զեկուցում և այլն), կարող է ապահովված լինել խոսակիցների անմիջական մասնակցութիւնը, սակայն որպէս հաղորդակցման միջոց կարող է հանդես գալ գրական լեզուն, ոչ թէ խոսակցականը: Առավել մեծ է հաղորդակցման ոչ պաշտոնական բնույթի դերը, որովհետեւ նույնիսկ գրական լեզվով հաղորդակցվելու դեպքում, երբ պաշտոնական փոխհարաբերութիւնները տեղի են տալիս ոչ պաշտոնականի, փոխվում է նաև հաղորդակցման միջոցը (նման դեպքերում մեծ մասամբ կատարվում է անցում գրականից խոսակցական լեզվին):

Բայց էականը ոչ թէ այս հատկանիշների տարաբեռն լինելն է ու տարբեր դեր ունենալը, այլ այն, որ դրանց համակցումը, դրանց համատեղ առկայութիւնը մեծ մասամբ թելադրում է խոսակցական լեզվի ընտրութիւնը:

Շատ կարևոր է նաև մի շարք այլ հատկանիշների բացահայտումը, որոնք ոչ թե պայմանավորում են խոսակցական լեզվի ընտրությունը, այլ տարբեր շափերով ազդում են նրա կառուցվածքի վրա, ձևավորում են այս կամ այն ժանրային տեսակը, մղում են օգտագործելու լեզվական այս կամ այն միջոցը և այլն:

Հատկանիշներին այս շարքը սովորաբար բաժանում են երկու խմբի-

ա) իրադրությունը վերաբերող հատկանիշներ,

բ) խոսակիցներին վերաբերող հատկանիշներ:

Իրադրությանը վերաբերող հատկանիշները բովանդակում են այնպիսի էական կողմեր, ինչպիսիք են իրադրության և հաղորդակցման կապը (իրադրությունը կապված է, թե կապված չէ խոսակցական լեզվին, ընդ որում, մի դեպքում այն կարող է լրացնել խոսքին, մի այլ դեպքում խոսակցական լեզուն կարող է զուգակցվել իրադրությանը, կրել ժանոթագրության բնույթ և այլն), իրադրության հաճախականությունը (սովյալ իրադրությունը կարող է լինել, ստեղծվել հազիվ մեկ կամ երկու անգամ, թե կարող է կրկնվել հաճախակի՝ ներառելով տարբեր մասնակիցներին), հաղորդակցական ակտի տեղը (որտեղ է կատարվում հաղորդակցությունը՝ տանը, փողոցում, տրանսպորտում, խանութում, հիմնարկությունում և այլն), կողմնակի մարդկանց ներկայությունը (եթե կան կողմնակի, անժանոթ մարդիկ, հաղորդակցումը տեղի կունենա որոշակի սկզբունքով լեզվական կամ շարժողական միջոցների ընտրությամբ, եթե չկան՝ համեմատաբար ազատ ու անկաշկանդ) և այլն:

Առավել բազմազան ու բազմաբնույթ են խոսակիցներին վերաբերող հատկանիշները, և դրանց տարբեր տեսակները կարող են որոշակիորեն տարբեր ազդեցություն ունենալ խոսակցական լեզվի վրա, դրսևորել ու պայմանավորել նրա տարբեր առանձնահատկություններ:

Այդ հատկանիշներից առավել կարևորների սոսկ թվարկումը շատ բան կարող է ասել: Դրանք են. ա) հաղորդակցության մասնակիցների թիվը (երկուսն են, թե երկուսից ավել, ըստ այդմ էլ նրանց հաղորդակցումը կարող է դրսևորվել երկխոսության, զրույցի կամ պատումի ձևով), բ) հասակը (խոսակիցները հասակակիցներ են, թե նրանց միջև կան տարիքային տարբերություններ), գ) սեռը, դ) կրթությունը, ե) խոսակիցների ակտիվությունը, խոսող-լսող դերի փոփոխությունը, զ) խոսակիցների միջև տարբեր տեսակի փոխհարաբերությունները, նրանց դիրքը (նրանց փոխհարաբերությունները մտերմական են, չեզոք, թե պաշտոնական, տեսնում են իրար, թե չեն տեսնում, ծանոթ են, թե ծանոթ չեն), է) հաղորդակցության նյութի կամ հաղորդման նախորդած իրադրության նախնական իմացությունը, ը) խոսակիցների անհատական առանձնահատկությունները (հակվածությունը շատախոսության կամ

քշխոսության, տրամադրությունը, խոսակցության թեմայի նկատմամբ վերաբերմունքը), թ) խոսակիցների դերը (մշտական է՝ ընտանիք, մասնագիտություն, թե ժամանակավոր՝ գնորդ, հաճախորդ, ուղևոր, հանդիսատես), ժ) հարաբերությունը ժամանակի հետ (խոսակիցները ժամանակ շատ ունեն, թե՛ չունեն) և այլն:

Հաղորդակցական ակտի ընդհանուր հատկանիշները շատ են ու տարաբնույթ, ուստի առավել հանգամանորեն դրանց անդրադառնալու հարկ չկա: Ասվածն էլ բավական է համոզվելու համար, որ հենց այդ արտալեզվական գործոններն են մի դեպքում պայմանավորում խոսակցական լեզվի ընտրությունը որպես հաղորդակցման միջոց, իսկ մի այլ դեպքում բավարար հիմք են ստեղծում նրա լեզվական ու կառուցվածքային տարբեր առանձնահատկությունների դրսևորման համար: Մասնավորապես հաղորդակցական ակտի ընդհանուր հատկանիշների հետ են կապվում նաև խոսակցական լեզվի համակարգին բնորոշ այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են հաղորդակցման ոչ բառային միջոցների օգտագործումը (զանազան շարժումներ, դիմախաղ և այլն), ամուր կապվածությունը իրադրության հետ (դա երբեմն այնքան սերտ է լինում, որ արտալեզվական իրադրությունը դառնում է հաղորդակցության բաղադրիչ մասը), գերազանցապես բանավոր ձևով դրսևորումը, մասնատվածությունն ու անդամատվածությունը և այլ իրողություններ:

Նշված երևույթների մանրամասն քննությունը մեր հոդվածի խընդիրների մեջ չի մտնում, տվյալ դեպքում մեր նպատակը ամենից առաջ այնպիսի հատկանիշների բացահայտումն է, որոնք կապված են առօրյա խոսքի կառուցման սկզբունքների հետ:

Առօրյա խոսքի կառուցման սկզբունքները բաղմամբ են և առանձնանում են մի շարք էական հատկություններով: Այդ իսկ պատճառով էլ նպատակահարմար ենք համարում կատարել դրանցից մի քանիսի՝ առավել կարևոր, առավել բնորոշ ու տարածված սկզբունքների վերլուծությունը: Խոսքի կառուցման այդպիսի էական սկզբունքներ են խոսքային խնքնընթացությունը, լեզվական ստեղծագործությունը, հավելումն ու բացթողումը:

Քննենք դրանք առանձին առանձին:

1. ԽՈՍՔԱՅԻՆ ԻՆՔՆԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆ

Խոսքային խնքնընթացությունը (սպտոմատիզմ) դրսևորվում է որպես ձգտում դեպի լեզվական պատրաստի կաղապարների օգտագործումը: Խոսողը լեզվական միջոցներից ընտրություն կատարելու համար առանձնապես ջանք չի թափում և իր խոսքը կառուցում է՝ կի-

յրառելով արդեն հանրահայտ ու տարածված ձևակերպումները կամ նկատի ունենալով խոսակցի ընտրած ձևերը, տրվելով նրա կառուցած խոսքի ինքնացիային:

Այս միտումն ունեցող մարդկանց համար առավել կարևոր է դառնում բուն հաղորդակցությունը, մտքերի փոխանակությունը. նրանք եթե անտարբեր էլ չեն խոսքի ձևի նկատմամբ, ապա դրան առանձնապես մեծ ուշադրություն չեն դարձնում, դրա համար էլ մեծ մասամբ բավարարվում են արդեն եղած, պատրաստի լեզվական միջոցներով կամ բանաձևերով իրենց խոսքը կառուցելով, իրենց ասելիքը արտահայտելով:

Խոսքի ինքնընթացության այս միտումը բազմազան դրսևորումներ ունի և ընդգրկում է խոսակցական լեզվի կառուցվածքի բոլոր օղակները. իսկ խոսակցական լեզվի բոլոր օղակներում էլ կան համապատասխան իրադրությունների համար արդեն պատրաստի ձևակերպումներ ու կաղապարներ, որոնց օգնությանը առանց տատանվելու դիմում է խոսողը:

Որպես խոսքային ինքնընթացության առավել ցայտուն նմուշների՝ անդրադառնանք միայն վարվելակերպի բանաձևերին և, այսպես կոչված, քաղաքային իրադրական խոսքատիպերին:

Խոսակցական լեզվի մյուս ժանրերից սրանք առանձնանում են ամենից առաջ այն հանգամանքով, որ հաղորդակցության լեզվական միջոցները առավել սերտորեն են կապված իրադրության հետ: Սրանք մշտապես հանդես են գալիս որպես պատրաստի խոսքային ձևակերպումներ, ընդունված, տարածված արտահայտություններ ու ռեպրիկներ՝ ամրակցված որոշակի իրադրությունների և պայմանավորված դրանցով: Ավելին, սրանք կարծես թե այդ որոշակի իրադրությունների յուրատեսակ լեզվական ուղեկցորդներն են: Այդպիսի իրադրություններ կարող են համարվել տրանսպորտը, խանութը, կանգառը, վարսավիրանոցը, ճաշարանը, խնայդրամարկղը և այլն, որոնցից եթե ոչ բոլորում, ապա որոշ մասում մարդը գրեթե ամեն օր է լինում: Ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ վայրերում կամ տեղերում միշտ էլ հավաքված են լինում որոշ քանակությամբ մարդիկ, որոնք որոշակի փոխհարաբերությունների մեջ են մտնում: Այդ փոխհարաբերությունների բնույթը գրեթե միշտ էլ տարբեր մարդկանց համար նույնական է լինում, նույնական են նաև նրանց կատարած գործողությունները այդ տեղերում: Այսպես, ասենք վարսավիրանոցում փոխհարաբերությունների բնույթը պայմանավորված է վարսավիր-հաճախորդ բաղադրիչներով, իսկ գործողությունների նույնականությունը հանգում է սափրվելուն կամ մազերը հարդարելուն, խանութում տիրապետող գնորդ-վաճառող փոխհարա-

բերութիւնն է, իսկ գործողութիւնների նույնականութիւնը կապւած է դրամ վճարելու և պահանջած իրը կամ ապրանքը ստանալու երևույթի հետ և այլն:

Ահա տարբեր մարդկանց համար հաճախակի կրկնվող այս իրադրութիւնները, փոխհարաբերութիւնների ու կատարած գործողութիւնների նույնականութիւնն էլ հենց պայմանավորում են այդ իրադրութիւններում տարբեր մարդկանց հաղորդակցութեան նպատակի ու հաղորդակցութեան միջոցների նույնականութիւնը: Դրա համար էլ հաղորդակցութեան մասնակիցները զխափորապես դիմում են արդեն պատրաստի խոսքային ձևակերպումների, ընդհանրական-իրադրային խոսքատիպերի:

Խոսակցական լեզվում այսպիսի ընդհանրական խոսքատիպերի առկայութիւնը ամենից առաջ բխում է դրանք ծնող իրադրութիւնների հաճախականութիւնից. ոչ հաճախական իրադրութիւններում դրանք սովորաբար չեն հանդիպում կամ շատ քիչ են հանդիպում:

Իրադրային խոսքատիպերը պատրաստի, քարացած ու կայուն բանաձևեր են ոչ միայն քերականական կառուցվածքով, այլև բառային հագեցվածությամբ: Նույնիսկ այդ իրադրութիւններում չգտնվելով՝ մարդը հանգիստ կարող է կռահել, ենթադրել, թե ինչ են ասում այս կամ այն դեպքում ինչ բառեր ու կառուցվածքներ են օգտագործվում: Այդ բանաձևերի յուրատեսակ նույնականությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ նույնիսկ որևէ օտար վայրում, օտար միջավայրում, օտար լեզվով հաղորդակցվելու պայմաններում էլ, ասենք, որևէ տոմսարկղից, խանութից, փոստից կամ վարսավիրանոցից օգտվելիս խոսողը իրեն հայտնի խոսքատիպերի օրինակով կարողանում է հաղորդակցվել՝ առանձնապես շտաբերվելով մշուսներից:

Այս խոսքատիպերի կառուցվածքային կայունութեան վկայութիւնն է նաև այն հանգամանքը, որ դրանցից շեղվելու դեպքում էլ, այնուամենայնիվ, խոսքը ձևավորվում ու զարգանում է դրանց օրինակով, ենթարկվում է դրանց ժանրային առանձնահատկութիւններին:

Ընդհանուր առմամբ կրելով խոսակցական լեզվի հատկանիշները, իրադրային խոսքատիպերը այս հարցում էլ յուրահատկութիւններ են հանդես բերում. դրանցում հաղորդակցութեան ոչ պաշտոնական բնույթը պակասում է կամ, համեմայն դեպս, փոխված է: Դա բխում է նրանից, որ այսպիսի դեպքերում հաղորդակցութիւնը տեղի է ունենում սովորաբար միմյանց անժանոթ մարդկանց միջև: Այդ հաղորդակցութիւնն իր բնույթով նաև պաշտոնական է, որովհետև այդպիսին է դիմում հարաբերութիւնը, ասենք, վաճառողի և գնորդի, մատուցողի և հաճախորդի միջև և այլն: Սակայն ռգա պաշտոնականութեան

միանգամայն առանձնահատուկ տեսակ է¹։ Այլ կերպ ասած, դա կարճես «մտերմական», «պայմանական» պաշտոնականություն է, չի պահանջում խստիվ շրջանակումներ։ Բացի այդ, դա ղուգակցված է կոնկրետ խոսակցական լեզվին բնորոշ իրադրության հետ, ուղեկցվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են անպատրաստությունը, անկաշկանդությունը, խոսակիցների անմիջական մասնակցությունը և որոնք էլ հնարավոր են դարձնում, որ այդ պաշտոնականության աղդեցությունը խոսքի ընդհանուր որակի վրա մեծ չլինի։

Իրադրային խոսքատիպերը մեծ չափով ենթակա են նաև մասնագիտական խոսքի աղդեցությանը։ Դա բխում է նրանից, որ այդպիսի խոսքատիպեր ծնող իրադրություններին հատուկ են մասնագիտական տրոշ կարգի բառեր, տերմիններ, արտահայտություններ ու բառակապակցություններ, որոնց խոսողը ստիպված է դիմելու՝ հաղորդակցության մեջ մտնելու համար։ Այսպես, շուկայում խոսողը գրեթե անհրաժեշտաբար կարող է գործածել կամ լսել «գին», «արժեք», «թանկ», «էժան», «կիլո(գրամ)» և այս կարգի այլ տերմիններ, իսկ վարսավորանոցում խոսակցության մեջ կարող են հանդես գալ այդ բնագավառին հատուկ արտահայտություններ, տերմիններ ու բառեր։

Իրադրային խոսքատիպերի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ դրանցում լեզվական ձևավորում են ստանում հիմնականում միայն իրադրությամբ շնորհյալացված նախապայմանները. այն, ինչ առկա է որպես իրադրություն, սովորաբար բառային դրսևորմամբ չի արտահայտվում։ Օրինակ, Պարույր Սևակի «Անլուելի ղանգակատուն» պոեմը գնելու համար ընդհանուր հերթում գտնվող մարդը կարող է պարզապես լեզվական միջոցներ օգտագործել միայն գրքի քանակը նըշելու համար («Մեկ հատ», «Երկու», «Երեք» և այլն), որովհետև մյուս նախապայմաններն արդեն առկա են որպես իրադրություն, պարզ են ու հասկանալի։

Իսկ եթե իրադրությունը բավականաչափ որոշակի է ու միատարր, ապա ընդհանրապես լեզվական միջոցներ կարող են չօգտագործվել։ Այսպիսի դեպքերում հաղորդակցությունն իրականացվում է միայն որոշ կարգի գործողությունների կատարումով։

Օրինակ, կրպակում վաճառվում է թարմ ձուկ։ Հայտնի է նաև գինը Գնորդներից մեկը լուռ մեկնում է մեկ ուրվիանոցը. դա խնդրանք է ձկնավաճառին՝ տալու մեկ կիլոգրամ ձուկ։

Խոսքային ինքնընթացության, դրանով պայմանավորված՝ լեզվական կաղապարների տարածվածության մասին ասվածը ավելի պարզ

¹ «Русская разговорная речь. Тексты». М., 1978, стр. 270.

դարձնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում պարզապես ներկայացնել վարվեցողության բանաձևերի որոշ շարքեր: Դրանք ենթարկված են իմաստային-թեմատիկ դասակարգման ըստ պաշտոնականության/ոչ պաշտոնականության հատկանիշների:

Դասակարգման ընթացքում ձեռքի տակ ենք ունեցել ոչ միայն մեր հավաքած նյութերը, այլև որպես համեմատության եզր և կողմնորոշիչ օգնական՝ խոսակցական ռուսերենի տեքստերի ժողովածուն², որի մեջ վերջիններս, թեմատիկ դասակարգումից բացի, ենթարկված են դասակարգման նաև անկաշկանդություն /չեզոքություն/ պաշտոնականություն հատկանիշներով:

Մենք չեզոքությունը չենք դնում դասակարգման հատկանիշների շարքում, որովհետև խոսակցական հայերենում այն շատ հարաբերական է (արդյո՞ք միայն հայերենում) և կարող է դրսևորվել թե պաշտոնականության, թե անկաշկանդության հատկանիշներին միաձուլվ, այլ կերպ ասած, տվյալ արտահայտությունը չեզոք ձևով կարող է կիրառվել թե պաշտոնական, թե անկաշկանդ խոսքում, այն շատ դեպքերում զուտ հնչերանգային դրսևորում ունի:

Ներկայացվող յուրաքանչյուր խումբ բաղկացած է երկու մասից. Ա մասում պաշտոնականություն հատկանիշով բնութագրվող բանաձևերն ու արտահայտություններն են, որոնք հատկանշական են գրական լեզվին, իսկ Բ մասում՝ ոչ պաշտոնականություն հատկանիշով բնութագրվողները, որոնք հատկանշական են առօրյա խոսքին: Երկու դեպքում էլ ներկայացված են ոչ թե հնարավոր բոլոր բանաձևերն ու արտահայտությունները (մի բան, որ գրեթե անհնարին է), այլ առավել ընդունելի և տարածված համարվողները:

Ո Ղ Ջ Ո Ւ Յ Ն

Ա. — Բարև ձեզ, (ընկերներ), (ընկեր Սիմոնյան), Բարի երեկո, (ընկերներ), (ընկեր Արշակյան), Ողջունում ենք (եմ) ձեզ, Պատիվ ունեմ (ենք) ողջունելու, Ուրախ եմ ձեզ տեսնելու (ողջունելու), Հարգանքներիս հավաստիքը, Մեր ողջույնն ենք հղում ..., Բոցավառ ողջույն, Թույլ տվեք ողջունել ...

Բ. — Բարև, Բարի օր, Ողջույն, Բար(ի)կուն, Բարև-բարև, Ում(ն) եմ տեսնում, ողջույն (բարև), Որ սարից, որ քարից, Սալլուտ, Պրիվետ, Բարին (բարով) տեսանք, էս որ քամին է բերել, Բարենք ...

² «Русская разговорная речь. Тексты». М., 1978.

Ծանոթություններ. — 1. Ողջույնի պաշտոնականություն հատկանիշով բնութագրվող շատ բանաձևեր նույնպես ենթադրում են որոշակի կոնկրետ իրադրություններ, ասենք, եթե Բարի երեկո, Բարև ձեզ, Հարգանքներիս հավաստիք, Պատիվ ունեմ ողջունելու և այլ արտահայտություններ կարող են կիրառվել համեմատաբար տարբեր, բազմապիսի իրադրություններում, ապա Մեր ողջույնն ենք հղում, Բոցավառ ողջույն արտահայտությունները ավելի խիստ են ամրակցված որոշ կոնկրետ իրադրությունների: Դրանք գործածվում են հատկապես պաշտոնական հանդիսությունների, հավաքների ժամանակ:

2. Ողջույնի պաշտոնական ձևերը իրենց բուն նշանակությամբ միանգամայն ազատ հանդես են գալիս նաև գրավոր լեզվում, սովորաբար կարող են ունենալ նաև գրավոր դրսևորում:

3. Ողջույնի պաշտոնական ձևերը երբ կիրառվում են որպես ողջույնի անկաշկանդ, առօրյա-սովորական դրսևորման միջոցներ, ձեռք են բերում յուրատեսակ մտերմական կամ կատակային երանգներ:

Հմմտ. երկու ընկերներ հանդիպում և միմյանց ողջունում են Բոցավառ ողջույն, Իմ ողջույնն եմ հղում և նույնատիպ այլ արտահայտություններով:

4. Ողջույնի անկաշկանդ արտահայտություններն ու ձևերը գրական գրավոր դրսևորումներում համեմատաբար ազատ չեն գործածվում իրենց բուն նշանակությամբ: Այսպիսի դեպքերում դրանք սովորաբար հանդես են գալիս որպես ոճական միջոցներ այս կամ այն գործող անձը կամ կերպարը բնութագրելու համար:

5. Առօրյա խոսքում շատ են տարածված նաև ողջույնի անհատական բանաձևերը, այսինքն այնպիսի արտահայտությունները, որոնք բնութագրական են միայն այս կամ այն անհատի լեզվին: Օրինակներ. Ողջագութանք, Բարևի նետ, Ողջույնի սլաֆ և այլն:

6. Բավականաչափ յուրահատուկ են ողջույնի, այսպես կոչված, առաֆական ձևերը: Դրական լեզվին հատկապես հատուկ են Հաղորդե՛ք իմ բարեկեցություն, Խնդրում եմ հաղորդե՛ք մեր սրտագին ողջույնները, բարեկեցություն, Ջերմագին ողջույններ մեր կողմից, Մեր ողջույնները հղե՛ք նրան և այլ նմանատիպ արտահայտություններ, իսկ պոռոյա խոսքում տարածված ձևերն են. Շատ բարև կանես, Բարև տա՛ր/ա՛րա, Իմ կողմից շատ կբարևես, Բարեկեց(ս) տղաներին/Պոռոյսին, Կասես՝ շատ բարև է՛ր անում/բարևում է՛ր, Անպայման կբարևես, Բարեկիր և այլն:

Ա. — Յտեսություն, Թույլ տվեք հրաժեշտ տալ, Մնաք բարով, Առաջժմ, Թույլ տվեք գնալ, Թույլ տվեք ցտեսություն ասել, Մինչ նոր հանդիպում (եթերում||բարեկամներ), Բարի գիշեր (ձեզ)...

Բ. — Յտեսություն, (Դե||ես) գնացի, Մինչև վաղը, Մինչև երկուշաբթի, Մինչ նոր հանդիպում, Հաջողություն, (Դե) ողջ եղեք, Բարի գիշեր, Մնաք բարով, Առաջժմ, Չառ, Պրիվետ, Սալյուտ, Հաջող, Ցե, Բայ բայ (որպես բարի գիշեր), Բայ բայ (որպես ցտեսություն), Ադյո, Գուդբայ, Դե... և՛ հրաժեշտի ժեստ, էհ... և՛ ժեստ, Մնացեք խաղաղությանը, Բարի հիշեք, Աստված ձեզ հետ...

1. Ինչպես տեսնում ենք, հրաժեշտի որոշ արտահայտություններ նույնն են թե անկաշկանդ, թե պաշտոնական իրադրություններում: Այսպիսի դեպքերում դրանց տարբերությունը դրսևորվում է հարակից լեզվական այլ ցուցիչներով ու միջոցներով (հնչերանգ, հարգանք ցույց տվող բառեր, մասնիկներ և այլն):

2. Որպես հրաժեշտի միջոցներ գործածվում են նաև մի շարք խժաբանություններ ու ժարգոնային բառեր (Ցե, Հաջող և այլն): Թերևս ժարգոնային պիտի համարել նաև օտար լեզուներից առնված մի շարք բառերի կիրառությունը (Չառ, Պրիվետ, Սալյուտ և այլն), մի քանի որ հատկապես նկատելի է երիտասարդների խոսքում: Ընդ որում, այդ բառերի մի մասը շատ հաճախ բուն նշանակությունից բացի ստացել է նաև հակառակ նշանակությունը, օրինակ. Չառ, Պրիվետ, Սալյուտ և այլ բառեր կարող են նշանակել և բարև, և ցտեսություն՝ իհարկե, տարբեր դեպքերում որոշակի մտերմական կամ կատակային նրբբանջներով: Այս երևույթը նկատելի է նաև մի քանի հայերեն բառերի գործածության մեջ (Հմմտ. Ողջուն-ողջուն, Ողջուն-ցտեսություն):

3. Հրաժեշտի իրադրային բանաձևերում հաճախ կարող են կիրառվել որոշ կոշականներ, բառ-մասնիկներ, եղանակավորող բառեր ու ձայնարկություններ: Այսպես. Դե, ցտեսություն, էհ, ողջ եղեք և այլն: Երբեմն լեզվական միջոցներին կարող են փոխարինել դիմախաղն ու ժեստերը. (Դե... և ձեռքի թափահարում, Հեյ... և գլխի շարժում, որ նշանակում է Գնացի՛նք և այլն): Երբեմն էլ պարզապես կատարվում է հրաժեշտի համար անհրաժեշտ գործողությունը (ձեռքսեղմում, հեռանալ, գրկախառնություն և այլն), որը կարող է ուղեկցվել որոշ կոշականներով կամ ձայնարկություններով (էհ... և ձեռքսեղմում, որ նշանակում է հենց ցտեսություն, մնաք բարով):

4. Հրաժեշտի բանաձևերին ի պատասխան առաջացել են մի շարք ընդունված, ընդհանրական արտահայտություններ ու ռեպլիկներ, որոնք

հիմնականում ունեն մաղթանքի բնույթ: Դրանք կարող են լինել հրա-
ժեշտի համար ասված արտահայտության կրկնությունը, կամ այլ կարգի
ձևակերպումներ: Մի քանի օրինակ. Բարին քեզ հետ, Աստված քեզ
օգնական, Բարով զնաս, Բարի վերադարձ, Հաջողություն քեզ և այլն:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. — Թույլ տվեք մեր շնորհակալությունը հայտնել, Մեծապես
շնորհակալ եմ (ենք), Մեծապես երախտապարտ ենք, Մենք ձեզ ան-
չափ պարտական ենք, Թույլ տվեք մեր երախտիքի խոսքն ասել, Սրտա-
գին շնորհակալություն, Անչափ զգացված ենք, Մեր խորին երախտա-
գիտությունն ենք հայտնում ձեզ, Մեր շնորհակալությունները ձեզ, Ան-
չափ զգացված ենք ձեր վերաբերմունքից ...

Բ. — Շատ (անչափ) զգացված եմ, Շատ շնորհակալ եմ, Ապրես,
գոհ եմ, (Անչափ) գոհ եմ, (Վայ) չգիտեմ ինչ ասեմ, Ուղղակի բառեր
չեմ գտնում, Մեծապես շնորհակալ եմ, Աստված էլ քեզ օգնի, Ուղղակի
ցնցված (զգացված) եմ, Շնորհակալ եմ մինչև այստեղս (ցուցամատը
կոկորդին հորիզոնական ուղղությամբ քսելու ժեստ), Մեքսի, Դու
ասածուց իջար, Դու փրկեցիր ...

Շնորհակալական արտահայտություններն ունեն իրենց պատասխան
ձևերը, որոնք այդ պատասխանը տվողի կողմից որոշակի վերաբեր-
մունքի դրսևորման արդյունք են:

Այդ վերաբերմունքը կարող է ուղղված լինել.

ա) Բուն կատարված գործողությանը, այսինքն թե այդ գործո-
ղությունը առանձնապես դժվար չի եղել կատարողի համար (Դատարկ
բան էր, Հասարակ բան է և այլն):

բ) Այդ վերաբերմունքը կարող է ուղղված լինել հենց շնորհակալու-
թյունը հայտնելու երևույթին, որպես փոխադարձ արձագանք, այսինքն՝
թե արվածի համար շնորհակալություն հայտնել պետք չէ (Չարժի, Ոչինչ
և այլն):

գ) Շատ դեպքերում այդ վերաբերմունքը կարող է դրսևորվել որ-
պես մաղթանք, փոխադարձ բարի ցանկություն՝ ուղղված շնորհակա-
լություն հայտնողին: Այդպես է լինում հատկապես հյուրասիրություն-
ների, նվերներ տալու, որևէ բան հանձնելու, որևէ իրի տեղափոխության
դեպքում շնորհակալական խոսքին պատասխանելու ժամանակ: Ասենք,
հյուրասիրության համար շնորհակալություն հայտնելուն ի պատաս-
խան հնչում են Անուշ լինի, Անուշ աբեֆ և այլ ռեպլիկներ: Իսկ եթե

շնորհակալութիւն հայտնողին օգնել են տուն տանելու նոր գնած դաշնամուրը, հագուստը կամ կահույքը՝ Շնորհավոր լինի, Բարով բանեցեմք, Բարով գործածեմք, Բարով մաշեմք և այլն:

Իհարկե, վերաբերմունքի այսպիսի տարրալուծումը միանգամայն պայմանական է, շատ դեպքերում այն լինում է այս բոլորի հանրագումարը կամ հանդես է գալիս դրանց տարբեր փոխներթափանցումներով:

Հ Ա Մ Ա Զ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. — Դուք ճիշտ եք, Միանգամայն համաձայն եմ (ձեզ հետ), ես առարկութիւններ չունեմ, Անկասկած, Միանգամայն համամիտ եմ (ձեզ հետ), ես չեմ առարկում, ես բաժանում եմ ձեր կարծիքը, Համաձայն եմ, Այլ կարծիք չի կարող, Անառարկելի փաստ է, Ձեր ասածը միանգամայն ճշմարիտ է ...

Բ. — Այդպես, Այդպես-այդպես, Պարզ է, Այո, Այո-այո, Պարզ բան է, Լավ, (Դե) Իհարկե, Անշուշտ, Ծիշտ է, Ծձմարիտ է, Դու ճիշտ ես, Բա ոնց, Բա ինչպես, Կարելի է, Փաստ է, Պայմանաւորվեցինք, Հնարավոր է, Գուցե և, Դե էլ ինչ, Բա ինչ, Ինչ կա որ, Ասենք (թե), Դեմ չեմ, ես համաձայն եմ, 100 տոկոսով համաձայն եմ, Հասկանալի է, Վճռված է, Եղավ, Ուրախությամբ, Սիրով, Հաճույքով, Ահա, Ըհը, ես կողմ եմ, Թող որ ...

1. Բուն համաձայնության արտահայտութիւնները դրսևորվում են ասվածի հաստատումով կամ ասվածը չփոխելու վերաբերմունքով (Ծիշտ է, Համաձայն եմ, մյուս կողմից՝ Դեմ չեմ, չեմ առարկում և այլն):

2. Մի քանի ուսուցիչներ արտահայտում են համաձայնութիւն պայմանով (Ընդունենք, Դիցուք, Ասենք թե):

3. Որոշ արտահայտութիւններ ցույց են տալիս համաձայնութիւն՝ զուգակցված այլ իմաստային նրբերանգների հետ (Կարելի է, Հնարավոր է, Գուցե և, Թերևս):

4. Որոշ արտահայտութիւններ էլ պարզապես ցույց են տալիս վերաբերմունք ասվածին համաձայնելուց հետո կատարվելիք գործողութիւն կամ իրողութիւն նկատմամբ (Հաճույքով, Սիրով, Ուրախությամբ, Վճռված է):

Ա Ն Հ Ա Մ Ա Զ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. — Ներեցեք, դուք ճիշտ չեք, Կարծում եմ՝ դուք ճիշտ չեք, Չգիտեմ, Ծիշտ է դա, արդյոք, Ձեմ կարող ձեզ հետ համաձայնել (համաձայն լինել), Թույլ տվեք չհամաձայնել, Թույլ տվեք ասել, որ դա (դուք)՝

ձեր ասածը) ճիշտ չէ (հավանական չէ), Կասկածում եմ, թե դա այդպես է, Համամիտ լինել չեմ կարող, Չեմ կարծում...

Բ. — Ոչ, Չէ, Այդպես չէ, Ինչ ես ասում, Չի կարող պատահել, Հնարավոր չէ, Ցնդե՞լ ես, գժվե՞լ ես, Հո խելքդ չես թոցրել, Խելքդ հացի հե՞տ ես կերել, (ինչ-որ) կասկածելի է, Հիմարություն է, Անհեթեթություն է, Ասում ես, էլի, Բա ոնց չէ, էլ Ի՞նչ կուզելիր, Ինչքան գիտեմ՝ այդպես չէ, Համաձայն չեմ, Հաղիվ թե դա ճիշտ է, Այ, հենց դրան դեմ եմ (համաձայն չեմ), Ինչպե՞ս կարելի է, Անկարելի է, Չի կարելի, Խաբըր, Բա չէ, Բա ոնց, Բա եղա՞վ, Բա ինչ, է, Դե, դե...

1. Անհամաձայնության արտահայտությունների մի մասը յուրատեսակ փոխադամանավորվածության մեջ է համաձայնության ռեպլիկաների հետ, կարծես թե ծագում, բխում է նրանցից՝ լինելով դրանց հակառակ դրսևորումը թե իմաստով, թե լեզվական ձևակերպմամբ։ Հմմտ.՝ ճիշտ է — ճիշտ չէ, համաձայն եմ — համաձայն չեմ, համամիտ եմ — համամիտ չեմ և այլն, կամ՝ ճիշտ է — սխալ է, համաձայն եմ — դեմ եմ, կարելի է — անկարելի է և այլն։

2. Անհամաձայնության արտահայտությունների մի մասն էլ հենց բուն նշանակությամբ է այդպիսին՝ առանց համաձայնության ռեպլիկաների հետ ունեցած անմիջական պայմանավորվածության (Ոչ, Չէ, Ասում ես, էլի)։

3. Անհամաձայնության ռեպլիկաներով դրսևորվող վերաբերմունքն էլ կարող է տարբեր ուղղվածություններ ունենալ, որոնք հիմնականում հանգում են ասվածի գնահատմանը՝ ցույց տալով դրա նկատմամբ մերժողական, թերահավատության կամ անվստահության, արհամարհական կամ անհնարինության, կատակային կամ անհանդուրժողական նրբերանգներ (Ինչ ես ասում, Հիմարություն է, Անհեթեթություն է, Խելքդ թոցրել ես և այլն)։

4. Որոշ բառեր ու ռեպլիկաներ, որ իրենց բուն նշանակությամբ կարող են համաձայնություն կամ հաստատում արտահայտել, միայն հրնչերանգի փոփոխությամբ երբեմն հանդես են գալիս որպես անհամաձայնության արտահայտիչներ (Իհարկե, Բա ոնց, Ոնց չէ, Բա ինչ, Ճիշտ ես ասում, ճիշտ)։

5. Մի քանի կոչականներ, ձայնարկություններ ու առանձին բառեր նույնպես ակտիվորեն դրսևորում են անհամաձայնություն (Հըլթ, Դեդե, Հայ-հայ, Պահո, Վայ և այլն)։ Այսպիսի դեպքերում երբեմն ներկաների համար դրանք կարող են անհասկանալի լինել, եթե նախնական իմացությունը բացակայում է։

Ա. — Բարի եղեք, խնդրում եմ նեղութիւն չհամարեք, Դուք չէի՞ք առարկի ..., Դուք չէի՞ք համաձայնի ..., Ձեզ դիմում եմ մի շատ կա-
րևոր խնդրանքով, Դուք չէի՞ք կարող ...

Բ. — խնդրում եմ, լավ էլի, Դե լավ, Կարելի՞ է ..., Ծս կարո՞ղ եմ...,
Ձե՞ս ասի, Չմոռանաս, հա՞, Կանես, չե՞, Ախպոր (քրոջ) պես, Հը, Դե...

1. խնդրանքի իրադրային արտահայտութիւնները կարելի է խմ-
բավորել հատկապես երկու կարևոր հատկանիշով, որոնք որոշակի կա-
յուն ձև են ապահովում. բառական և հնչերանգային:

Շատ տարածված է բառական միջոցներով խնդրանք արտահայտե-
լը. խոսքն այն մասին է, իհարկե, որ կան առանձին բառ-ցուցիչներ,
որոնց գործածութիւնը նպաստում է խնդրանքի այս կամ այն նրբե-
րանգի դրսևորմանը, հակառակ դեպքում, պարզ է, լեզուն ամեն ինչ
էլ ամենից առաջ բառային դրսևորման է ենթարկում: Այդպիսի բառ-
ցուցիչներից կարելի է նշել. էլի, Դե, լավ և այլն: Սրանք, դրվելով
ցանկացած ուրիշ բառի վրա, կարող են խնդրանք արտահայտել՝ հա-
մապատասխան երանգներով: Իսկ այդ բառը սովորաբար կարող է
լինել բայ. դա այդպես է, որովհետև որևէ մեկին մի բան խնդրել, մեծ
մասամբ նշանակում է, որ այդ մեկը կատարի կամ չկատարի որևէ
գործողութիւն: Այս ճանապարհով առաջացած խնդրանքի արտահայ-
տութիւնների շարքը տեսականորեն բաց է, որովհետև միշտ էլ կա-
րելի է ասել որևէ բայ, նրան ավելացնել խնդրանք արտահայտող ցու-
ցիչը՝ ստանալով համապատասխան արտահայտութիւնը: Օրինակներ.
Ասա, էլի—Դե ասա, Տուր էլի—Դե տուր և այլն: Իհարկե, այսպիսի
դեպքերում մեծ դեր է կատարում հնչերանգը: Այս ցուցիչները կարող
են հանդես գալ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասնաբար:
Դա բխում է խնդրանքի չափից, խոսակիցների փոխհարաբերութիւն-
ների մտերմութեան պատիճանից (պաշտոնական իրադրութիւններում
այդպիսի ցուցիչներ սովորաբար չեն կիրառվում, իսկ եթե երբեմն կի-
րառվում են՝ խոսքին հաղորդում են որոշակի մտերմական երանգ):

2. Նույն բանը կարելի է ասել հարցական հնչերանգով գործածվող
որոշ բառ-ցուցիչների մասին: Ծվ, ընդհանրապես, հարցական հնչերան-
գը հաճախական կիրառութիւն ունի խնդրանքի արտահայտութիւննե-
րում: Այդ հարցումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Դա պար-
զապես կարող է լինել սովորական հարցում որևէ բան իմանալու, որևէ
բան կատարելու թույլտվութիւն ստանալու համար. այդպիսիք են Կա-
րելի՞ է ..., Ծս կարո՞ղ եմ ..., Ձե՞ս քողնի ... և նման ուրիշ արտահայ-
տութիւններ:

Հաճախ այդ հարցումը դրսևորվում է հարցում արտահայտող այլ փարզի բառերով՝ Ձէ՞, Հա՞, Այո՞ և այլն, որոնք շեշտը կրելով իրենց վրա, միաժամանակ որոշակի վերաբերմունք դրսևորելու նպատակին են ծառայում: Այդ վերաբերմունքը կարող է լինել հաստատական (Կարելի է, չէ՞ ..., Կարող եմ, չէ՞ ... և այսպիսի այլ արտահայտություններ դրա ցայտուն վկայությունն են): Այդ վերաբերմունքը կարող է լինել նաև, այսպես կոչված, ստուգողական, երբ բառ-ցուցիչների միջոցով արտահայտվող հարցումը նպատակ ունի ստուգելու խնդրանքի իրականացման կամ մերժման վերաբերյալ խոսակցի վերաբերմունքը: Այս ճանապարհով առաջացած ու առաջացող արտահայտությունների շարքն էլ տեսականորեն բաց է:

3. Սովորաբար խնդրանքի բանաձևերում շեշտվում է կամ գործողությունը (այն գործողությունը, որ խոսողն ինքը կամ խոսակիցը պիտի կատարեն՝ Գամ, էլի, Կասես, չէ՞) կամ էլ բուն խնդրելու երևույթը. դա վերածվում է մի տեսակ թույլտվության՝ հենց խոսակցին նախ որևէ խնդրանքով դիմելու (Կարելի է, չէ՞, խնդրել, որ ...):

4. Խնդրանքի արտահայտությունների ծնող իրադրությունների հաճախականությունը պատճառ ու հիմք է դարձել, որ ձևավորվեն նաև խնդրանքի հատուկ դիմախաղեր ու շարժաձևեր:

Եվ, նայած իրադրությունն ինչպիսին է, կարող են օգտագործվել միայն այդ դիմախաղերն ու շարժաձևերը: Որպես օրինակ հիշենք մի բան խնդրելու համար համապատասխան իրադրության մեջ վիզը ծռելը, ձեռքը մփով դեպի վեր առաջ պարզելը, բռնել ու ցուցամատը միաժամանակ տարբեր կողմերից ծնոտին քսելը և այլն:

Այս շարժաձևերը հաճախ ունենում են որոշ կարգի բառային ուղեկցորդներ, որոնք առանց դիմախաղերի ու շարժաձևերի էլ կամ նրանց հետ միասին կարող են արտահայտել խնդրանք: Այդպիսի ուղեկցորդ բառերից են Հը, Դե, էլի, Լավ էլի, Ըհը և այլն: Ասենք նաև, որ այս ձևով դրսևորվող խնդրանքին տրվող պատասխանն էլ կարող է լինել միայն որևէ դիմախաղ կամ շարժաձև՝ առանց ուղեկցորդ բառի կամ նրա հետ միասին:

Հետաքրքիր է, որ այդ խնդրանք արտահայտող դիմախաղերին ու շարժաձևերին համապատասխան լեզվում առաջացել են որոշ կայուն արտահայտություններ, որոնք գործածվում են խնդրանքն ընդունելու կամ ժխտելու համար. Մեռանք վիզ ծռելով — Իզուր վիզ մի ծռեք, Մնացի ծնոտս քորելով — Անտեղի ծնոտ չեն քորի և այլն:

Թերևս նոր օրինակների դիմելու հարկ չկա: Ներկայացված նյութն էլ միանգամայն բավական է ցույց տալու համար, որ մարդն իր ամենօրյա գործունեության ընթացքում՝ ողջունելիս կամ հրաժեշտ տալիս,

շնորհավորելիս կամ ցավակցելիս, որևէ բանի թույլտվություն խնդրելիս կամ որևէ բանի հետ շհամաձայնելիս, խանութում որևէ բան գնելու ժամանակ կամ փոստում, խնայդրամարկղում զանազան մուծումներ կատարելիս և այլ իրադրություններում հաղորդակցվելիս սովորաբար բավարարվում է լեզվական հայտնի, տարածված ու պատրաստի միջոցներով, որն էլ հենց խոսքի կառուցման ինքնընթացության սկզբունքի բուն էությունն է:

2. ԼԵԶՎԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. ԼԵԶՎԱԽԱՂ

Լեզվական ստեղծագործությունը լեզվի գոյության բոլոր փուլերում նրան մշտապես ուղեկցող երևույթ է և անխզելիորեն կապված է նրա փոփոխման ու զարգացման ընթացքին որպես դրա անհրաժեշտ նախապայման:

Լեզվական ստեղծագործությունն իր բնույթով ամենից առաջ հակադրվում է խոսքային ինքնընթացությանը: Եվ իրականում էլ դրանք միանգամայն տարբեր ձգտման արդյունք են: Եթե խոսքային ինքնընթացության դեպքում ձգտումը, նպատակը ընդամենը հաղորդակցվելն է, դրսևորման ձևը՝ նման պայմանների, նման իրադրությունների համար արդեն ստեղծված պատրաստի բանաձևումների, լեզվական կաղապարների օգտագործումը, ապա այս դեպքում ձգտումը, նպատակը ոչ միայն հաղորդակցվելն է, այլև ինքնատիպ, սովորականից տարբերվող ձևով հաղորդակցվելը, բնականաբար՝ տարբեր են լինում նաև լեզվական դրսևորման միջոցները:

Խոսքի կառուցման այս երկու հակադիր սկզբունքները «խոսակցական ուսաց լեզուն» գրքում բնութագրված են այսպես.

1) «Խոսակցական լեզուն մի համակարգ է, որում խոսողը հեշտությամբ, ազատ և հաճախակի, քան նորմավորված գրական լեզվում, ստեղծում է նոր միավորներ (ոչ թե վերարտադրում է արդեն պատրաստիները), ընդ որում դա վերաբերում է տարբեր մակարդակների միավորներին:

2) Խոսակցական լեզուն մի համակարգ է, որին վերին աստիճանի բնութագրական է պատրաստի միավորներ, ամեն տեսակ պատրաստի կառույցներ օգտագործելու ձգտումը, որ բացատրվում է խոսքային ինքնընթացությամբ: Խոսողը, գտնվելով անկաշկանդ և անպատրաստ հաղորդակցության պայմաններում, ձգտում է պարզեցնել և թեթևացնել

իր «խոսքային վարքը», որի համար էլ հեշտությամբ և հաճախակի դիմում է լեզվական պատրաստի կաղապարների...»³:

Լեզվական ստեղծագործության հակում ունեցող մարդիկ անտարբեր չեն խոսքի ձևի նկատմամբ, մեծ նշանակություն են տալիս դրան, ձգտում են նաև խոսքի ձևով ազդեցություն գործել, հաղորդակցությունը դարձնել առավել տպավորիչ, ինքնատիպ, հետաքրքիր ու դիպուկ: Նրանք հակված են, հաղորդակցվելուց բացի, հանդես գալ նաև որպես յուրատեսակ «նորարարներ»:

Ինչպես տեսնում ենք, թե խոսքային ինքնընթացությունը, թե լեզվական ստեղծագործությունը պայմանավորված են խոսքի ձևի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Այս առումով անհրաժեշտություն է զգացվում խոսելու լեզվի կարևոր կողմերից մեկի՝ գեղագիտական գործառույթի դրսևորման մասին:

Լեզվական ստեղծագործությունը ենթադրում է խոսքի ձևի հաշվառում հաղորդակցության ժամանակ: Այս սկզբունքով կառուցված խոսքը հատկապես մերձենում է գեղարվեստական խոսքին, իսկ խոսողն ու գեղարվեստական ստեղծագործության հեղինակը իրար են նմանվում թեկուզ այնքանով, որ երկուսն էլ կարող են ստեղծագործաբար վերաբերվել խոսքի ձևին: Սակայն գեղարվեստական ստեղծագործության մեջ գեղագիտական գործառույթը անհրաժեշտ, պարտադիր բաղադրամաս է, դա հեղինակի հիմնական նպատակադրությանն ուղեկցող կարևոր միջոցներից մեկն է և մշտապես հաշվի է առնվում, որովհետև հեղինակի նպատակը ոչ միայն որևէ բան ասելն է, այլև տպավորիչ, գեղագիտորեն ասելը: Իսկ խոսակցական լեզվում գեղագիտական գործառույթը փոքր-ինչ այլ դրսևորում ունի. հաղորդակցվողի համար պարտադիր պայման չէ մշտապես նկատի ունենալ խոսքի ձևը, նրա գեղագիտական գործառույթը, բայց ցանկացած ժամանակ դա թույլատրելի է, և խոսողը ուղած պահին, հարմար գտնելու դեպքում, կարող է անդրադառնալ դրան:

Բացի այդ: Եթե դժվար է ընդհանրապես վերջնական պատասխան տալ այն հարցին, թե խոսակցական լեզվի որ ժանրն է գերիշխող այս առումով, ապա հաստատապես կարելի է ասել, որ «այն ժանրերի բաժինը, որոնցում դրսևորվում է ոչ միայն խոսքի գործնական, այլև ինչ-որ չափով նաև գեղագիտական գործառույթը, այնքան էլ աննշան չէ, որքան դա ընդունված է համարել»⁴:

³ Е. А. Земская, М. В. Китайгородская, Е. Н. Ширяев, Русская разговорная речь. Общие вопросы. Словообразование. Синтаксис. М., 1981, стр. 6.

⁴ Д. Н. Шмелев, Русский язык в его функциональных разновидностях, М., 1977, стр. 36.

Դա նշանակում է, որ խոսակցական լեզվում էլ հաճախ շեշտվում է ոչ միայն ինչը, այլև ինչպես: Պարզ է նաև դրանից բխող եզրակացությունը. խոսակցական լեզվում գեղագիտական գործառույթը սերտորեն կապված է խոսքի կառուցման ստեղծագործական սկզբունքի հետ: Դրանով էլ պայմանավորված է խոսողի ազատությունը ինչպես լեզվական միավորների ընտրության, այնպես էլ դրանց զուգորդման ու շարակցման հարցում:

Լեզվական ստեղծագործությունը երկու հիմնական կողմ ունի.

1) Լեզվական նոր միավորների ստեղծում:

2) Լեզվական եղած միավորների նորովի կիրառություն, այսինքն դրանց այնպիսի գործածություն, որը սովորական ու համատարած չէ և մեծ մասամբ անսպասելի է:

Հենց այս ճանապարհով են առաջացել մի շարք նոր բառեր, կառույցներ, արտահայտություններ, ձևավորվել են բառերի մի շարք նոր իմաստներ, որոնցից շատերը փոխանցվել են նաև գրական լեզվին: Այս երևույթը մշտապես գործառույթ է, և լեզվական տարբեր տեսակի փոփոխությունները ոչ միայն հասարակության զարգացման համապատասխան՝ երևույթներով են պայմանավորված, այլև բխում են այս հանգամանքից:

Հատկապես առօրյա խոսքում լեզվական ստեղծագործությունը հաճախ է դրսևորվում որպես լեզվախաղ: Այս առումով էլ ավելի հանգամանալից խոսենք հենց դրա մասին:

Լեզվախաղը, ինչպես ցույց է տալիս անվանումը, խաղ է լեզվի հետ և նրա միջոցով: Դա լեզվական ստեղծագործության արդյունք է, որովհետև խոսողը փաստորեն ստեղծագործում է. միաժամանակ դա խաղ է, որովհետև կատակելու, զվարճախոսելու, խոսքը հետաքրքիր չարձնելու նպատակ է հետապնդում: Բերենք միայն մեկ օրինակ՝ դիմելով մեզ լավ հայտնի ողջույնի իրադրական արտահայտություններին. գրեթե բոլոր հաղորդակցվողների համար էլ սովորական, ինչոր տեղ նույնիսկ «պարտադիր» են ողջույնի ընդունված ու տարածված բանաձևերը, և բոլորն էլ, առանց երկար մտածելու, գործածում են դրանք: Բայց եթե խոսողը տրամադրված է լեզվական խաղի, և արտալեզվական իրադրությունն էլ նպաստում է դրան, նա շեղվում է ընդունված կաղապարներից, օգտագործում որևէ ինքնատիպ միջոց, որևէ նոր արտահայտություն: Այսպիսով առաջանում են անհատական խոսքային ձևեր. Ողջագուրա՛նք, Ողջույնի՛ սլաֆ, Բաբևի՛ նետ և այլն: Այս արտահայտություններում առկա է ստեղծագործելու պահ. առկա է նաև լեզվախաղը՝ ձանձրալի շլինելու, կատակելու, զվարճախոսելու նպատակադրումը:

լեզվախաղն իր բնույթով ու ձևերով բազմազան է ու բազմատեսակ: Նրա դրսևորմանը կարող են ծառայել լեզվական ամենատարբեր միջոցներ: Դիտարկենք դրանցից առավել տարածված ու բնորոշ ձևերը: Ե) Ոնական անհամատեղելիություն, ոնական շեռտերի միավորների տեղափոխություն.— Խոսքի մեջ հաճախ հանդիպող մի հնարք է սա, որին խոսողը դիմում է՝ լրացնելով կատակելու իր մտադրությունը: Այսպիսի դեպքերում առանձնապես մեծ տպավորություն է թողնում նյութի, խոսակցության թեմայի և ընտրած ոճի անհամատեղելիությունը. նյութի և ոճի այս հակադրությունն էլ հենց դառնում է լեզվախաղի հիմքը: Լեզվախաղի գործառությունը շատ բանով է նպաստում նաև այն հանգամանքը, որ լեզվի գործառական տարբեր ոճերից վերցվում են այնպիսի հայտնի ձևակերպումներ, այնպիսի արտահայտություններ, որոնք սովորաբար բնորոշ չեն խոսակցական լեզվին: Օրինակներ.

(Մի քանի ընկերներով հյուր են և երկար ժամանակ սոված են եղել. հայտնի է նաև, որ իրենց ընկերներից մեկը՝ Արամը, շատակեր է ու արդեն անհամբեր է: Վերջապես սկսվում է հյուրասիրությունը: Մեկը (Ա), նկատի ունենալով այս հանգամանքը, դիմում է լեզվախաղի, մյուսը (Բ), ընդունելով լեզվախաղի այդ ձևը, շարունակում է նրա խոսքը).

Ա. — Վերջապես պիտի իրականանա Արամի կուշտակերության բազմաժամյա երազանքը ...

Բ. — Ի դեմս տանտերերի այս փառավոր ճաշկերույթի:

Կամ՝ (ամուսինը այցի եկած մորաքրոջ ներկայությամբ խոսում է իր կնոջ մասին).

— Մեծ է նրա պատմական առաքելությունը մեր ընտանիքի տնտեսական և առողջական հիմքերի ամրապնդման գործում: Միայն կաթնավաճառի հետ նրա երկարածամկետ ու արդյունավետ բանակցությունների շնորհիվ է, որ մենք ապահովված ենք ամենօրյա թարմ կաթով:

Ինչպես նկատվում է բերված օրինակներից, խոսքի ինքնատիպությունը, մտերմական, կատակային երանգը դրսևորվում են որպես արդյունք թեմայի և ոճի անհամատեղելիության, մասնավորապես՝ խոսքը յուրատեսակ տպավորիչություն է ձեռք բերել առօրյա, կենցաղային փաստերի և դրանց ոչ բնորոշ հանդիսավոր տոնի զուգակցման շնորհիվ:

բ) Լեզվի զարգացման տարբեր փուլերի կամ նրա զանազան տարբերակների միավորների անսովոր կիրառություն. — Սա փաստորեն նախորդ երևույթի դրսևորման մյուս կողմն է: Եթե առաջին դեպքում

վերցվում են տարրեր, միավորներ լեզվի գործառական տարրեր ոճերից և կիրառվում են իրենց ոչ համապատասխան լեզվական միջավայրում, ապա այս դեպքում վերցվում են տարրեր, միավորներ լեզվի տարածքային կամ ժամանակային զարգացման տարրեր փուլերից և գործածվում դարձյալ նույն սկզբունքով: Այսպիսի դեպքերում լեզվախաղի համար հիմք կարող են ծառայել բարբառը, զրաբարը, միջին հայերենը, ժարգոնը, հասարակաբանությունը և այլն, ավելի ճիշտ՝ դրանցից վերցված որոշ կարգի արտահայտություններ ու կառույցներ: Բերենը օրինակներ միայն բարբառային միավորների կիրառության վերաբերյալ.

— Լույսն անջատեցի՞ր:

— Խա, խա, հըբը իմալ:

Կամ՝ — Այլա Պուգաշովայի համերգի տոմսեր ուզու՞մ ես:

— Ուզըմ չեմ:

Ի դեպ, բուն բարբառներում այս ձևերը միանգամայն սովորական ու գործածելի են, դրանք կատակային նրբերանգ են ձեռք բերում միայն շնորհիվ անսպասելի, անսովոր կիրառության:

Որպես լեզվախաղի դրսևորման միջոց կարող է ծառայել նաև բարբառային որոշ կայուն, քաղաքած ձևերի զրականացումը.

Հմմտ.՝ Ջանիդ մեռնեմ — Մարմնիդ մահանամ, Աչքահարեւ — Աչքով հարվածել և այլն:

Ինչպես արդեն ասվեց, լեզվախաղի համար կարող են ընտրվել ամենատարբեր կարգի միավորներ: Եվս մեկ օրինակ՝ հասարակաբանության տարրերի օգտագործմամբ.

— Հը, հավանեցի՞ր:

— Շա լավ ա (այսինքն՝ շատ լավ է):

Լեզվախաղի նպատակով կարող են գործածվել ոչ միայն նույն լեզվի զարգացման տարրեր փուլերի կամ տարբերակների միավորներ, այլև ուրիշ լեզուներից փոխառված բառեր ու արտահայտություններ, կայուն կառույցներ ու բառակապակցություններ, նույնիսկ քերականական զանազան իրողություններ:

Օրինակներ. Ախըր, շատ սլադկի տղա է, Տեսնում ե՞ս դրան, իմպըրտնի լեզվով է խոսում:

Այսպիսի լեզվախաղերը գործառում են հատկապես այն պայմանով, եթե դրանք նման ձևով խոսողների ընդհանուր հատկանիշը չեն, այսինքն՝ երբ հայտնի է, որ խոսողը այդ բառերն ու արտահայտությունները գործածում է միտումնավոր կերպով, ոչ թե հայերեն համապատասխան ձևերը չիմանալու պատճառով:

գ) Իմաստային տարբեր մակարդակների միավորների գուգակցում.— Այս դեպքում էլ սկզբունքը նույնն է. միասնաբար գործածվում են լեզվական այնպիսի միավորներ, որոնք սովորաբար իմաստային առումով գուգակցելի չեն, կամ ընդունված ու կիրառելի չեն: Հենց այս հանգամանքն էլ տպավորություն է գործում, խոսքին հաղորդում կատակային տարբեր երանգներ: Օրինակներ.

— Քանի՞ երեխա ունի, գիտե՞ս:

— Հաշվել է լինու՞մ որ: Իսկական բաղմասերիանոց կին է (նկատի է առնվում երեխաների շատությունը, իսկ սովորական կիրառությամբ կին և բաղմասերիանոց բառերը իմաստով դուգորդելի չեն):

Կամ՝ Երեք տարի է քաղաքում ես ապրում, չքաղաքացա՞ր (Հմմտ. մի կողմից՝ չընտելանալ, չհարմարվել, մյուս կողմից՝ չքաղաքանալ, չըգիրանալ, չծանրանալ և այլն):

Իմաստային դուգորդելիության խախտման օրինակներ են նաև Բերանդ կոճկիր, Կաղ ատամդ հանեցի՞ր, Ազնվացեղ արյուն չունեն, խառնածին են, շարժն դրանց փող տալ (ասվում է կոշիկների մասին) և այլ նմանատիպ արտահայտություններ:

դ) Բառերի փոխաբերական կիրառություն.— Խոսքը այնպիսի փոխաբերական կիրառությունների մասին է, որոնք սովորաբար ամրակցված են որոշակի իմաստային դաշտերի, բայց այս դեպքում դուրս են բերվում այդ դաշտից, միացնում երբեմն անհարկ, չմերվող մի երևույթի, դրանով իսկ առաջացնելով որոշակի տպավորություն: Հատկապես հետաքրքիր է, որ այսպիսի դեպքերում հաճախ ստեղծվում ու գործածվում են այնպիսի բառեր ու կառույցներ, որոնք այդ ձևով ու իմաստով գոյություն չունեն կամ չեն կարող ունենալ: Այսպես.

— Էդ ի՞նչ երկար դիսաջրացիա ես գրել (հմմտ.՝ դիսերտացիա):

— Տեսնես ո՞վ է եղել էս ասֆալտաթուխը (խոսողը նկատի ունի հացթուխին և հացի վատորակությունը):

ե) Որոշ նեղիմաստ տերմինների կամ բառերի վերաիմաստավորում.— Սրանք այնպիսի կիրառություններ են, որոնց դեպքում արդեն քաղաքած, միակ նշանակությունը գործածվում է այլ նշանակությամբ, դրանով իսկ դրսևորելով խոսողի վերաբերմունքը խոսակցության նյութի, առարկայի նկատմամբ:

Այդ ձևով կիրառվում են հատկապես պատմական որոշ կարգի տերմիններ, ինչպես նաև մի շարք հարանուն կամ նույնանուն բառեր: Օրինակներ.

— Տանը գրիչ շատ կա, արի, մեկը կտամ: Մենակ չորս հատ որ գրագիր ունենք (գրագիրը սովորաբար գրասենյակային պաշտոնյա է

նշանակում, իսկ այս դեպքում կիրառվել է գիր անող, գիր գրող իմաստով)։

Հողածին, երկնածին ... Դրանց դարն անցավ. կամ տատմեբաժին ենք, կամ հիվանդանոցածին։

Հաճախ վերաիմաստավորման են ենթարկվում նաև սովորական բառերն ու արտահայտությունները՝ ենթարկվելով միտումնավոր ձևափոխության կամ կեղծ ստուգաբանության։ Այսպես.

— Քաղաքում ի՞նչ ես անում։

— Սովորում եմ։

— Այ տղա, էդ լիառատ քաղաքում դու սով օրում ես։

Բերված օրինակում լեզվախաղը կառուցված է՝ նկատի առնելով սովորում բառի և մեկ այլ իմաստով հնչաբառի համընկնման հնարավորությունը։

դ) Փոխաբերական իմաստի առարկայացում. — Սա որոշ շափով նախորդի հակառակ երևույթն է. փոխաբերական իմաստով կիրառված բառը միտումնավոր կերպով հասկացվում է բուն առարկայական նշանակությամբ, որի միջոցով խոսողը դիմում է լեզվախաղի։ Օրինակ.

— Մեծամիտ է։

— Գրող է, ոչ մի մեծ միտք էլ չունի (առաջին դեպքում մեծամիտ բառը գործածված է «գոռող» նշանակությամբ, իսկ խոսակիցը կատարել է այդ բառի միտումնավոր մասնատում ըստ բաղադրիչների, որոնց նշանակության իր ըմբռնումն էլ առարկայական է)։

կամ — Շատ հաստամուկ մտա է երևում։

— Ի՞նչն է հաստամուկ, խեղճը աղջկա պես բարակ շուրթեր ունի։

է) Ձանազան կառույցների ու կայուն արտահայտությունների ըստեղծում՝ եղածների նմանողությամբ. — Լեզվական խաղի այս ձևն էլ բավական տարածված է։ Օգտվելով եղած դարձվածներից, շարահյուսական կայուն կառույցներից, հիմք ընդունելով դրանք, խոսողը ձևափոխում է դրանք կամ նմանողությամբ հորինում, ստեղծում է նորերը, որոնք որոշակի կատակային տրամադրություն, գնահատողական վերաբերմունքի ծաղրականություն են առաջացնում։ Այսպիսի կառույցները հասկանալի և ընդունելի են որոշակի կոնկրետ իրադրություններում, որոշակի միջավայրում։

Այ տղա, դու կարգին մաթեմատիկական գիտությունների մենեդգիլ ես (նկատի է առնված հայտնի կաղապարը՝ մաթեմատիկական գիտությունների թեկնածու, մյուս կողմից՝ նրա լավ երգելը)։ Գաղարից մինչև անգինա կես քայլ է (այս արտահայտությունը կառուցված է հանրահայտ թեմատիկայի խոսքի օրինակով, իսկ իրական հիմքն այն է, որ խոսողը գաղար գնելիս թրջվել է անձրևի տակ, մրսել, ցավում է կո-

կորդը, առկա են անգինայով հիվանդանալու նախանշանները): (Ներկու լեզվաբաններ գրուցում են խոյի բարբառի մասին. որոշ տարածայնություն կա նրանց միջև).

— Ափսոս իմ ծանոթ բարբառախոսը քաղաքում չէ, կհարցնենք:

— Հո նա վերջին խոյիկանը չէ, ուրիշ բարբառախոսից կհարցնենք (նոր բառակապակցությունը կառուցված է հայտնի «Վերջին մոհիկան»-ի նմանողությամբ):

ը) Հեզնական չափազանցում. — Լեզվախաղի այսպիսի օրինակներն էլ հիմնականում հանգում են բառի փոխաբերական կիրառությանը: Սակայն այս դեպքում կոմիկական երանգները դրսևորվում են ոչ այնքան փոխաբերության շնորհիվ, որքան չափազանցման: Ընդ որում, չափազանցումը կարող է լինել շեշտված դրական, կամ շեշտված բացասական:

Այս հնարքի էությունն այն է, որ անվանումը և դրանով արտահայտված նշանակությունը չեն համապատասխանում իրար, կա լուրատեսակ հակադրություն անվանման և նշանակության միջև: Հենց այս հանգամանքն էլ խոսողին հնարավորություն է տալիս հեզնելու կամ իրեն, կամ որևէ մեկին, կամ որևէ բանի:

(Ա-ն հրաժարվում է ընկերների հետ կիրականօրյա զրոսանքից՝ պատճառաբանելով, որ այդու գործ ունի: Մի քանի օր հետո Բ-ն լինում է նրա այգում).

Բ. — Կիրակի օրը իզուր չեկար, շատ լավ էր:

Ա. — Բա էս ապարանքը ո՞վ պիտի կառուցեր (կառուցածը մի փոքրիկ, փայտաշեն տնակ է): (Խմբով սպասում են մեկին. վերջապես հայտնվում է).

— Օ, նորին գերազանցությունը ժամանեց:

Այս օրինակներում հեզնական չափազանցումը կատարված է նշանակության դրական առումով սաստկացմամբ, բայց նպատակը հեզնելն է: Կա նաև հակառակ երևույթը, երբ չափազանցումը նշանակությունը խիստ նվազեցնող, պակասեցնող բնույթ ունի: Այսպես.

էդ կատվի ձագից էլ մարդ կվախենա՞, որ դու վախենում ես (խոսքը մի գամփռ շան մասին է): Փալասների համար խելքդ գնում է (նկատի է առնված խոսակցի՝ հագուստի նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրասիրությունը):

թ) Փոխանվանական կոնկրետացում և ընդհանրացում. — Այս դեպքում էլ ընդհանուր սկզբունքը պայմանավորված է անվանման և նշանակության անհամապատասխանությամբ, միայն թե դրանց միջև հակադրություն չկա: Պարզապես որևէ մասնավոր երևույթի անուն կարող է գործածվել ընդհանուրի փոխարեն, կամ՝ հակառակը:

Ա քառակուսի, Բ քառակուսին քո բանը չէ, դու լավ շերեփ կպրտտեցնես, Բանվոր դասակարգը չի՞ ուշանում աշխատանքից (խոսքն ուղղված է գործարանում աշխատող եղբորը):

Բերված օրինակներից առաջինում մաքեմատիկա և խոհարարություն ընդհանուր անվանումների փոխարեն կիրառված են դրանց մասնավոր երևույթներն անվանող բառեր, այսինքն տեղի է ունեցել փոխանվանական կոնկրետացում, իսկ երկրորդ օրինակում հակառակ երևույթին է՝ փոխանվանական ընդհանրացում:

Ժ) Հատուկ անունների օգտագործում. — Զանազան կարգի հատուկ անունները ընդհանրապես հաճախակի են հանդես գալիս լեզվախաղերում: Օգտագործելով տարբեր հիմնարկությունների, կազմակերպությունների, ընկերությունների, ուսումնական հաստատությունների կամ աշխարհագրական անուններ՝ խոսողը ստեղծում է նոր բառեր, բառակապակցություններ ու արտահայտություններ, որոնք անսովոր են:

Օրինակներ. Ծա գիտելիքահակ եմ («Գիտելիք» ընկերության անունից), էլի սկսեցի՞ր քո Ծրպիագովքը (Ծրեանի պոլիտեխնիկական ինստիտուտի անունից), Արարատամոլությունից կուրացել է, ուրիշների լավ խաղն էլ չի տեսնում («Արարատ» թիմի անունից) և այլն:

Այս տեսակետից հատկապես ակտիվ են անձնանունները: Ընդ որում, ավելի շատ են տարածված այնպիսի լեզվախաղերը, որոնցում գործածված են հանրահայտ անձանց ու կերպարների անուններ որպես բոլորին հայտնի որոշակի դադափարի, հատկանիշի, խավի կամ երևույթի արտահայտիչներ:

Օրինակներ. Քո դոնկիխոտությունից ես բան չեմ հասկանում, Դու էլ մի բարի պտուղը չես, Դոն Ժուանի մեկը, Դրան տես, գլխիս վրա նապուլեոն է դարձել, էլի՞ դու սկսեցիր, էլի՞ ներոնությունը միտդ ընկավ և այլն:

Սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ լեզվախաղերում օգտագործվում են միայն խոսակիցների շրջապատում հայտնի, ծանոթ անձանց անունները:

Բոլորդ Արմենից եք խոսում, էս ի՞նչ արմենացավ է, Վերջերս շատ նինայախույս ես դարձել, Շողիկական ձևերդ թող, լուրջ բան ունեմ ասելու և այլն:

Ժա) Մեքեբռումներ. — Հուզական և իմաստային ամենատարբեր նրբերանգներ դրսևորելու համար խոսողը հաճախ է դիմում մեջբերումների: Դրանք կարող են լինել առանձին հատվածներ կամ արտահայտություններ՝ վերցված գրական ստեղծագործություններից, հանրահայտ երգերից, ֆիլմերից և այլն:

Այսպիսի մեջբերումներն, անշուշտ, խոսքը դարձնում են հետաքրքիր, տպավորիչ ու ինքնատիպ:

Այս հնարքի գործառության կարևոր նախապայմաններից են խոսակիցների զարգացածության ընդհանուր մակարդակը, անհրաժեշտ գիտելիքների պաշարը, նման իրադրություններում շուտ կողմնորոշվելու հմտությունն ու կուտակած փորձը և այլն: Եթե այս նախապայմանները բացակայում են, մեջբերումները կարող են սպասվող աղդեցությունը չգործել, իրենց նպատակին չծառայել:

Սովորաբար մեջբերումները գործածվում են կողմնակի ձևով ասելիքը հաղորդելու համար, ունենում են որոշակի ենթատեքստ, փոխաբերական խմաստ: Հակառակ դեպքում դրանք չէին դիտարկվի որպես լեզվական ստեղծագործության դրսևորումներ, այլ կհամարվեին խոսքային ինքնընթացության արտահայտություններ, երբ խոսողը հաղորդակցվելու համար դիմում է արդեն պատրաստի կաղապարների օգնությամբ:

Օրինակներ. (Մեկը սենյակ է մտնում, որի դուռը բաց է, իսկ ներսում մարդ չի երևում). Հեյ, ուլատեր, հեյ, գառնատեր: (Մխախտի տուփը մոռացել է հարևան սենյակում, որոշ ժամանակ անց գնում է նույն սենյակ).

— Վա, ձեր խիղճը կտրվի, տուփը լրիվ դատարկել եք:

— Ինչ ենք արել որ. երկուսը մորթել կերել ենք, երկուսն էլ աշնանը կմորթենք:

Կամ՝ — Արդեն ուշ է, արագացրու, որ վերջին ավտոբուսին գոնե հասնես:

— Մի տեսակ չեմ ուղում: Ախրը ես ինչպե՞ս վեր կենամ գնամ ...

Հաճախ խոսողը մեջբերումներում կատարում է որոշ կարգի փոփոխություններ տվյալ իրադրության համար առավել բնորոշ դարձնելու նպատակով, այսինքն պատրաստի արտահայտությունները վերափոխում, հարմարեցնում է իրադրությանը: Այդպիսի փոփոխությունները կատարվում են հանպատրաստից ձևով, անսպասելիորեն և կարող են վերաբերել ինչպես բառային կազմին, այնպես էլ քերականական դրսևորմանը: Այսպես.

(Որոշում են գնալ լողանալու. մեկը երկմտում է).

— Զգաս՝ զոռով կտանենք,

Հոպինա, հոպինա, հոպինա, հեյ:

(Հյուրասիրության ժամանակ մատուցվում են նաև բլիթներ). Օ, ես սիրում եմ բլիթները նրբակերտ:

Բավական տարածված է նաև մեջբերումների կեղծ հեղինակավորման հնարքը: Ասելով որևէ սովորական միտք կամ խոսելով կեն-

քաղաքին որևէ մանրուքի մասին, խոսողը դա վերագրում է մի հանրահայտ անձի, որը ոչ մի կապ չունի տվյալ արտահայտության հետ: Ստացվում է հանրահայտ անձի մասին ունեցած ընդհանուր պատկերացման և տվյալ արտահայտության միջև անհամապատասխանության տպավորություն, որն էլ հենց դառնում է կատակելու անհրաժեշտ նախապայման.

Ինչպես Չարենցն է ասել՝ ձուն պիտի շատ շխաշել: Կարծես, Մոպսանն է ասել, չէ՞. թե գունավոր հեռուստացույց ունես՝ ստադիոն դնալ հարկավոր է: Ախրը, դեռևս Հոմերոսն է ասել, որ խաշի հետ թղթե անձեռոցիկներ չեն դնում:

Ջանազան կարգի մեջբերումներից առավել գործածական են այնպիսի ռեպրիկներն ու արտահայտությունները, որոնք վերցված են հանրահայտ կինոֆիլմերից: Այդպիսի արտահայտություններից են Գիւնով կուտվի, Ախպեւ ջան, էս ի՞նչ հաշիվ է, Սայաք, դու նորից խառնըվում ես քեզ շվեդաքեռոզ գործերին, Այ մարդ, դու ի՞նչ մարդ ես, բա չասի՞նք՝ ամաճաք ա և այլն:

Այսպիսի արտահայտությունները հաճախ մեջ են բերվում հենց այն լեզվով, որով հնչվում են կինոֆիլմում, որովհետև դրանց թարգմանությունը նույն տպավորությունը կարող է չթողնել («Ա. նամ վսյո րաֆինո», «Յա դդես գուլյալու, ա պատոմ ատսյուդա բուդու գուլյատ տամ» և այլն):

Այսպիսի դեպքերում խոսողը փորձում է ընդօրինակել նաև համապատասխան դերասաններին, պահպանել, վերարտադրել նրանց արտասանական բնորոշ առանձնահատկությունները:

Դիտարկված ձևերով չի սպառվում լեզվախաղերի դրսևորման բազմազանությունը: Լեզվախաղի գործուն տեսակներ են նաև փոխաբերական անվանարկումների զանազան ձևերը (հատկապես կենդանիների, կենցաղային տարբեր իրերի անունների օգտագործումը), արձագանքող ութմով բառակրկնությունները, խոսքային զանազան համեմատությունները, բառերի կապակցման օրենքների խախտումները և այլն:

Որոշ չափով պայմանական է նաև լեզվախաղերի այսպիսի խմբավորումը ըստ տարբեր միջոցների ու հատկանիշների: Լեզվախաղի առանձին դրսևորումներ կարող են աչքի ընկնել հատկանիշների բազմազանությամբ, տարբեր սկզբունքների ու միջոցների զուգադրությամբ:

Ներկայացված նյութից թող այն տպավորությունը չստացվի, թե խոսակցական լեզվում այդպիսի հաճախականությամբ անընդհատ գործում է լեզվախաղը. այդպես արված է նյութի ցուցադրման նպատակահարմարության թելադրանքով:

Լեզվախաղը ընդգրկում է լեզվի բոլոր մակարդակները՝ հնչյունա-

կան, բառային, քերականական: լեզվական մակարդակների տարբեր իրողություններ կարող են միջոց դառնալ տարբեր տեսակի լեզվախաղերի դրսևորման համար:

Հնչյունական մակարդակում այդպիսի միջոցներ կարող են համարվել հնչյունների զանազան փոփոխությունները, արտասանական տարբեր յուրահատկությունների կիրառությունը և այլն: Բերենք միայն մի քանի օրինակներ:

ա) Հնչյունների հավելում.

Խնչ ևս ուղյում, տեսնում ես՝ գրյում եմ, (յ-ի հավելում): Մեկ գառնը կբավարարի՞ ախքան մարդու (ն-ի հավելում) և այլն:

բ) Հնչյունների փոփոխություն կամ կորուստ.

Շուռճի շեղանի շուռջը դու քեզ լավ ևս զգում (ս-շ, ր-ռ փոփոխություններ): Արծյում, վերջացրի՞ր: Արծս ցանել եմ գարի (տ-ծ փոփոխություն): Որ տեսնես՝ իրեն էլ հետդ բե (ր-ի կորուստ, որ կարող է բացատրվել նաև բարբառային արտասանության ազդեցությամբ) և այլն:

գ) Որոշ բարդ հնչյունների տարրալուծված արտասանություն.

Միրուն դժան (ջ-դժ): Դա դղմերով է (ձ-դղ) և այլն:

Երբեմն սրանք ունենում են միջնորդավորված բնույթ: Այսպես.

Չվախենաս, էդդիկ, դա շատ զգյուրին բան է (անցումը դ-ից դղ-ի միջնորդավորված է դ-ձ փոփոխությամբ):

Դժվար չէ նկատել, որ լեզվական նորմաների տեսակետից դրանք բացարձակ սխալներ են: Եթե այդ սխալներն իսկապես պայմանավորված են խոսողի ֆիզիկական արատներով կամ լեզվական նորմաների չիմացությամբ, երկու դեպքում էլ օգնություն ու միջամտություն է հարկավոր՝ արատները բուժելու կամ սխալներն ուղղելու նպատակով:

Բայց այս դեպքերում այդ սխալները միտումնավոր բնույթ ունեն: Խոսողը ոչ ֆիզիկական արատ ունի, ոչ էլ անտեղյակ է լեզվական համապատասխան նորմաների գոյությանը: Նա կարծես դիտմամբ սխալվում է որոշակի կատակային, աշխույժ տրամադրություն առաջացնելու համար: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ լեզվական տարբեր կարգի սխալների կիրառությամբ լեզվախաղերը բավականաչափ շատ են:

Լեզվի բառային մակարդակը նույնպես հարուստ է լեզվախաղին դիմելու հնարավորություն ընձեռող տարբեր միջոցներով: Այդպիսի օրինակներ արդեն բերվել են, այստեղ բավարարվենք միայն -ավորածանցի անսովոր կիրառության մեկ օրինակով.

Տոմսավորվեցինք, դեռ ժամանակ էլ ունենք, գնանք սրճավորվենք (հմտ.՝ տեղավորվել, ձևավորվել, գունավորվել և այլն):

Գրեթե անսպառ են նաև լեզվախաղերի տարբեր տեսակների ձևա-

վորման՝ քերականական մակարդակի հնարավորությունները: Թե՛ ձև-վաբանական զանազան կարգերը (հոլով, թիվ, հոդ, որոշյալ-անորոշ առում, ժամանակ, եղանակ և այլն), թե՛ շարահյուսական տարբեր իրողությունները բավականաչափ առատ նյութ կարող են տրամադրել:

Ասվածից բխում է, որ լեզվախաղը ոչ թե լեզվական առանձին միավորների հատկությունն է, միայն դրանց բնորոշ իրողություն, այլ լեզվի ամբողջ համակարգն ընդգրկող երևույթ է:

Անշուշտ, լեզվախաղը կարող է լինել հաջողված կամ անհաջող, ուժեղ կամ թույլ, դիպուկ կամ ոչ տեղին: Միաժամանակ այն կարող է գործառել կամ չգործառել. դրա վրա, ինչպես ասվել է, ազդում են ընդհանուր իրադրությունը, խոսակիցների ընդունակություններն ու իմացությունը, տրամադրությունը, կատակելու հակումը և այլ հանգամանքներ: Այս կապակցությամբ կատարենք հետևյալ դիտարկումը. գնորդը խանութում սովորաբար բավարարվում է իրեն պետք եղած ապրանքը կամ իրը խնդրելով, իսկ նրա կատարած գործողությունը հանգում է դրամը մոժեխլուն, խնդրած իրը կամ առարկան վերցնելուն: Այդ նպատակով էլ նա մեծ մասամբ օգտագործում է արդեն պատրաստի մի շարք կաղապարներ. խնդրում եմ երկու տուփ ծխախոտ տվե՞ք, Տվե՞ք ինձ այդ գիրքը, խնդրեմ և այլն:

Բայց եթե գնորդը ուզում է շեղվել այդ բազում անգամ կրկնված կաղապարներից, ցրել հաղորդակցման միապաղաղությունը կամ կատակել, դիմում է լեզվական խաղի: Ասենք. Երկու հատ էդ կարմրախայտից տվե՞ք, հա՞: Եթե խանութում վաճառվում է իսկական կարմրախայտ ձուկ, ապա այս արտահայտությունը պիտի համարվի արդեն պատրաստի բանաձև, տիպական ու տարածված կաղապար՝ ընդունելի նման պայմանների դեպքում: Բայց եթե այդ արտահայտությունը ասվում է երկու տուփ «Սալյուտ» ծխախոտ գնելու համար, արդեն գործ ունենք լեզվական խաղի հետ, որի հիմքում ընկած է ծխախոտի տուփի կարմիր լինելու և տվյալ ժամանակահատվածում հենց նաև կարմրախայտ ձկան նման խանութում քիչ կամ հազվադեպ պատահելու հանգամանքը:

Եվ եթե վաճառողը գնորդի դիմախաղից կամ ցուցական շարժումներից հասկանում է նրա միտքը և ինքն էլ «մտնում» է լեզվական խաղի մեջ, այսինքն ինքն էլ է տրամադրված կատակելու, այդ ձևով արտահայտվելու, ուրեմն նրանց միջև հաղորդակցությունը իրականացվում է, հետևաբար լեզվախաղը գործառում է: Այսպիսի դեպքերում՝ վաճառողն էլ իր հերթին կարող է դիմել լեզվախաղի: Իսկ եթե վերջինս տրամադրված չէ դրան կամ չի հասկանում ասվածը, չի կողմնորոշվում, թե ինչի մասին է խոսքը, ապա կարող է կատարվել վերա-

հարցում, ասվածի ճշգրտում արդեն ընդունված կադապարների միջոցով, այսինքն՝ լեզվախաղը կարող է նաև չգործառնել:

Լեզվախաղը բնութագրելիս պետք է անդրադառնալ նաև այն հարցին, թե խոսքի բովանդակության մեջ ինչ փոխհարաբերությունների մեջ է այն, իմաստային ծանրաբեռնվածություն կրում է, թե ոչ, այսինքն այն մշտապես խստիվ կապված է խոսքի բովանդակությանը, թե այդ կապը կարող է և բացակայել կամ թույլ լինել: Հենց այս առումով հետաքրքիր է հետևյալ դիտարկումը.

«Լայն է լեզվախաղի երևույթների ընդգրկման շրջանակը: Մտնելով խաղի մեջ, խոսողը կարող է իր առջև բովանդակային ոչ մի խնդիր չդնել, բացի մեկից. չլինել ձանձրալի, ուժեղացնել հաղորդակցման անկաշկանդությունը, զվարճացնել իրեն և խոսակցին, իսկ դրա համար՝ արտահայտվել անսովոր: Բայց լեզվախաղը կարող է կապված լինել և խոսքի բովանդակությանը. այն կարող է ծառայել մտքի առավել դիպուկ և ճշգրիտ հաղորդմանը, հաղորդակցումը պատկերավոր և արտահայտիչ դարձնելուն: Եվ, վերջապես, լեզվախաղը կարող է ունենալ կերպավորման բնույթ՝ ծառայել կրկնօրինակելու այն մարդուն, որի խոսքերը ասում է խոսողը կամ տեսանելի ձևով վերարտադրելու խոսքային իրադրությունը»⁵:

Եվ իսկապես, լեզվախաղի շատ տեսակներ ամենից լառջ աչքի են ընկնում իմաստային տարբեր նրբերանգների դրսևորելու հատկությամբ, իմաստային ծանրաբեռնվածությամբ:

Սակայն լեզվախաղը երբեմն կարող է կիրառվել պարզապես կատակելու, աշխույժ տրամադրություն առաջացնելու, ձանձրալի խոսակցի չգառնալու համար: Լեզվախաղի այսպիսի դրսևորումները հանդես են գալիս որպես զվարճախոսություն:

Զվարճախոսության տարբեր տեսակներ կան, սակայն դրանց դրսևորման բոլոր ձևերը միավորվում են երկու կարևոր հատկանիշներով: Համառոտակի խոսենք այդ հատկանիշների մասին:

1) Խոսքի ռիթմավորում. — Զվարճախոսության որոշ տեսակներ հենց այս հնարքի արդյունք են: Որպես նշաձողեր ընտրելով տարբեր նմանահունչ բառեր՝ խոսքը ենթարկվում է որոշակի հանգավորման ու ռիթմավորման: Այսպիսի ցայտուն օրինակներ են հատկապես մանկական մի շարք խաղերում կիրառվող խոսքային ռիթմավորված հատվածները: Բուն խաղի առումով դրանք որոշ նպատակի կարող են ծառայել (օրինակ, դրանց կիրառումով կարելի է պարզել, թե ով է սկսելու խաղը), բայց դրանց լեզվական դրսևորումը, բովանդակությունը,

⁵ «Русская разговорная речь. Фонетика. Морфология. Лексика. Жест». М., 1983, стр. 174—175.

արտահայտած իմաստը մեծ մասամբ կապ չունեն ոչ հաղորդակցման իրադրության, ոչ էլ խաղի հետ: Այսպես.

Ես, դու, նա, Սև սա-տա-նա, Պա-տի տա-կին չո-րա-նա, Սև հաց ու-տի՝ քա-րա-նա: Կամ՝ Քաչալը գնաց տանձի, Վախենամ գլուխը խան-ձի, Գիշերը մտավ տեղը, Կատուն կերավ բեղը:

Ինքնին հասկանալի է, որ մանկական խաղերի համար կարևորը ոչ թե սրանց բովանդակությունն է, այլ արտասանական հավասար շա-փերով մասնատվածությունը, կայուն ռիթմը: Այդ է պատճառը, որ շատ դեպքերում նույնիսկ հնարավոր չի լինում հասկանալ խոսքային աշխատիսի հատվածներում օգտագործված բառերի իմաստը: Ավելի ճիշտ կլինի ասել, որ դրանք ոչ թե բառեր են, այլ հանգավորման և ռիթմավորման նպատակով գործածված հնչյունակապակցություններ: Թերևս հարկ չկա նման օրինակներով ծանրաբեռնել տեքստը, դրանք բավականաչափ տարածված են մանկական խաղերում և ցանկության դեպքում միշտ էլ կարելի է լսել:

Ռիթմավորման հնարքին դիմում են նաև սովորական հաղորդակցման ժամանակ: Ընդ որում, կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ ժեստերով ստեղծվող խոսքային ռիթմավորված հատվածներ, որոնք պարզապես զվարճանալու միջոցներ են: Բերենք միայն մեկ օրինակ.

(Ա.-ն մտնում է սենյակ, ուր իր երկու աշխատակիցներն են՝ Բ, Գ. Սեղանին դրված իր գիրքը չկա).

Ա. — Ի՞նչ եղավ իմ գիրքը:

Բ. — Կերանք, ինչպես միրգը:

Ա. — Սխալ է ձեր դիրքը:

Գ. — Հավ, մարիբ քո կիրքը:

2) Բառի հնչյունական կամ ֆեռականական ձևերի փոփոխություն.—

Այս ճանապարհով առաջացած զվարճախոսության տարրեր տեսականների հիմքում բառի այնպիսի փոփոխություններն են, որոնք ոչ թե կապված են խոսքի իմաստային կողմի հետ, այլ պարզապես այդ ձևերը ուրիշների նման չասելու, ուրիշներից տարբերվելու, զվարճանալու, արդյունք են: Բայց քանի որ այդ ձևերը որոշակիորեն կայուն են, ուստի այսպիսի զվարճախոսությունները մեծ մասամբ դրսևորվում են որպես լեզվական սխալներ:

Հնչյունական փոփոխություններով ձևավորվող լեզվախաղի որոշ տեսակների մասին արդեն ասվել է: Ինչ վերաբերում է քերականական ձևերի փոփոխմանը, ապա դրանք հիմնականում առնչվում են քերականական տարրեր կարգերի սխալ գործածությունների հետ:

Օրինակներ. Շատ գեղեցիկ ամփոփալույս է (խախտված է բառի բաղադրիչների կայուն շարադասությունը՝ լուսամփոփ): Այսքան շատ ծառները, քարները, ջրները լրիվ քո՞նն են (խախտված է հոգնակի թվի կազմության սկզբունքը, —եւ մասնիկի փոխարեն գործածված է —ներ): Շատ ուժեղ բայլորդ ես երևում (խախտված է ուղ ածանցի զուգորդելության սկզբունքը, հմմտ.՝ հեծանվորդ, դահուկորդ, վաղորդ և այլն):

Այս երկու գլխավոր հատկանիշները կարող են հանդես գալ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասնաբար, այսինքն զվարճախոսությունը կարող է ձևավորվել որպես հանգավորված ու ռիթմավորված խոսքային հատված, իսկ նրանում օգտագործված բառերը կարող են ենթարկված լինել հնչյունական կամ քերականական անսովոր, սր-խալ փոփոխությունների:

* * *

Ինչպես երևում է այս համառոտ շարադրանքից, թե խոսքային ինքնընթացությունը, թե լեզվական ստեղծագործությունը, լեզվախաղը առօրյա խոսքի կառուցման ամենագործուն սկզբունքներն են: Դրանց հիմքում ընկած է խոսքի ձևի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, այսինքն՝ խոսողը անտարբե՞ր է խոսքի ձևի նկատմամբ, թե՞ հատուկ ուշադրություն է դարձնում դրան: Ըստ այդմ էլ խոսողը կամ բավարարվում է համընդհանուր պատրաստի լեզվական կաղապարներով կամ դիմում է լեզվական ստեղծագործության, լեզվախաղի:

3. Հ Ա Վ Ե Լ Ո Ւ Մ

Առօրյա խոսքի կառուցման բնորոշ առանձնահատկություններից են և զանազան հավելումները: Դրանք կարող են լինել խոսելու ընթացքում առաջացած որևէ անսպասելի գաղափար, գլխում ծագած մի անսպասելի միտք, հանկարծակի հիշված որևէ հանգամանք, հիմնական միտքը լրացնող որևէ կարևոր իրողություն, որոնք անմիջապես էլ արտահայտվում են՝ ասվածի նկատմամբ հանդես գալով որպես հավելումներ: Օրինակներ.

Մեզ արդեն նոր մեքենա է պետք: Լվացքի: Իզուր ես նրա հետ կոպիտ խոսում: Ընկերոջդ: Չորս օր է՝ գիրքը տարել, չի բերում: Նվ լավ էլ անում է և այլն:

Այս ճանապարհով խոսակցական լեզվում առաջացել են տարբեր տեսակի հավելական կառույցներ, որոնք ազատորեն մուտք են գործել նաև գրական լեզվի մեջ և կիրառվում են նրա գործառական բոլոր ոճե-

ըում՝ արտահայտելով իմաստային, տրամաբանական և հուզական զանազան նրբերանգներ:

Եթե առօրյա խոսքում հավելումները խոսքի կառուցման սկզբունքից բխող երևույթներ են՝ պայմանավորված խոսքի մի շարք արտաբերական գործոններով (անպատրաստություն, խոսքի նկատմամբ խստիվ վերահսկողության բացակայություն, անկաշկանդություն և այլն) ապա գրական լեզվում դրանք դառնում են ոճական հնարքներ, — ահա այն հիմնական տարբերությունը, որ դրսևորում են այս հարցում գրական և խոսակցական լեզուները: Այդ իսկ պատճառով էլ հավելումների տարբեր տեսակների քննության նպատակով օրինակներ ենք վերցնում նաև գեղարվեստական քրականությունից ու պարբերական մամուլից, որովհետև դրանք ոչ թե հակադրվում են առօրյա խոսքում հանդես եկող հավելումներին, այլ դրանց ոճական տարբերակներն են:

Բոլոր կարգի հավելումները բնութագրվում են նախ իրենց իմաստային կողմով. դա այն է, որ հիմնական արտահայտության հետ իմաստային մեկ մակարդակի վրա չգտնվելով՝ միանում են նրան որպես լրացուցիչ հաղորդում, իմաստային ու վերաբերմունքային հավելում:

Հիմնական արտահայտության և հավելվող միավորի կապը սովորաբար տեղի է ունենում տեական դադարից հետո՝ հավելվող մասի արագ կամ դանդաղ արտասանությամբ:

Հենց այս հիմնական առանձնահատկություններով էլ պայմանավորված են հավելական կառույցների մյուս հատկանիշները. կառուցվածքային-արտասանական զուգահեռականության ինքնատիպությունը, բառերի յուրահատուկ դասավորությունն ու քերականական առանձնահատկությունները, ռիթմամեղեդիական և հնչերանգային համապատասխան դրսևորումը, եղանակավորության բազմազանությունը, դրանց կողմից ինչպես լրացուցիչ, այնպես էլ էական, կարևոր հաղորդում կատարելու հնարավորությունը, հիմնական արտահայտության արտաբերության ընթացքում կամ նրա ավարտից անմիջապես հետո առաջանալը, մշտապես հիմնական արտահայտությունից հետո դրվելը և այլն:

Հավելումները տարատեսակ են ու տարաբնույթ, դրանք առանձնանում են իրենց կառուցվածքային, քերականական հատկանիշներով, իմաստային ու շարահյուսական գործառությամբ, և դրանց տարբեր տեսակների քննությունը նպատակահարմար է կատարել որոշ սկզբունքների համաձայն դասակարգման ենթարկելով: Դասակարգման համար հիմք կարող են դառնալ դրանց կառուցվածքը, հիմնական մասին միանալու միջոցները, կատարած շարահյուսական դերը, արտահայտած իմաստն ու դրսևորած շարահյուսական հարաբերությունը:

ա) Հավելումների տեսակներն ըստ կառուցվածքի. — Ամենից առաջ աչքի է ընկնում հավելումների կառուցվածքային բաղադրանությունը: Դա բացատրվում է նախ նրանով, որ հավելումները կարող են հանդես գալ տարբեր կառուցվածք ունեցող լեզվական միավորներում: Այսպես, հավելական հարաբերությունը կարող է դրսևորվել պարզ նախադասության մեջ, երբ նրա մի մասը կամ անդամներից որևէ մեկը ընդհանուր շղթային կապվում է որպես հավելում:

Մենք նորից սկսեցինք պարել, այն էլ լրջորեն (ՎՊ, ԴԱ): Տղան աչքի ընկավ վարժ ընթերցումով, ինչպես նաև դուրեկան ձայնով (ՍՀԱ): Երբեմն պարզ նախադասության անդամներից մեկը հանդես է գալիս տեական դադարից (վերջակետից) հետո: Այն ձևականորեն ինքնուրույն նախադասության տեսք է ստանում՝ նմանվելով թերի նախադասությանը, բայց առանց հիմնական մասի անհասկանալի է լինում նրա իմաստը: Այսպիսի կիրառություններն, ըստ երևույթին, նույնպես պետք է դասել պարզ նախադասության սահմաններում հանդես եկող հավելումների շարքը:

Նա մեծ էր ինձանից: Տասներեք տարով (ԼԵ): Հմմտ.՝ Նա տասներեք տարով մեծ էր ինձանից: Երգեց: Վատ և տհաճ ձայնով: Սկզբից մինչև վերջ (ԶԿԱՄ): Գնաց խոհանոց և բաժակով ջուր բերեց. սառը, ուղղակի ծորակից (ԳԹ):

Հավելումներ կարող են լինել թե բարդ համադասական, թե բարդ ստորադասական նախադասություններում:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչներն իրար հետ կապվում են տարբեր հարաբերություններով, որոնցից մեկն էլ հենց հավելական հարաբերությունն է.

Անկարող էր եղբորն ասելու ճշմարտությունը, և դա զայրացնում էր նրան: Ոչ միայն գոհ է նրա խելքից ու առաքինությունից, այլև առանց որդու խորհրդի ոչինչ չի անում (ԱՃՀ):

Հավելական հարաբերությունը երբեմն զուգորդվում է նաև բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև դրսևորվող այլ հարաբերությունների հետ (միավորական, ներհակական, տրոհական):

Իմաստային, խնդրային և պարագայական տարբեր կիրառություններով հավելումները կարող են հանդես գալ նաև բարդ ստորադասական նախադասության կազմում՝ հավելական հարաբերություն արտահայտելով նրա բաղադրիչների միջև:

Ժողովն սկսվեց ժամը վեցին, երբ որ պետք է սկսվեր: Այլևս չի պարտադրում իր ընկերակցությունը, որից անչափ ուրախ եմ:

Հավելական հարաբերությամբ կապվում են նաև առանձին, ինք-

նորոյն նախադասութիւններ: Ընդ որում, կարող են միանալ պարզ նախադասութիւններ.

Ինչ լավ կլինի, էրեւել էն օրը ... Երեխիս էլ կմկրտեմ (ԲԵ): Գեղեցիկ վայր է: Նաև աղբյուրներ շատ կան: Սիրտը խառնում էր: Կրծկումներն էլ ալեւի սաստկացան (ՆՄԴ):

Սովորաբար այսպիսի դեպքերում հավելվող նախադասութիւնը դրվում է անմիջապէս նախորդից հետո: Բայց պատահում է, որ դրանք իրարից բաժանված են լինում որևէ ուրիշ նախադասութեամբ կամ որևէ միջանկյալ կապակցութեամբ:

Բոլորդ էլ փախել էիք: Մնացել էինք երկուսով: Դու էլ էիր փախել: Միծաղից թուլացել էինք: Մենակ դու էիր լուրջ: Հետիդ աղջիկն էլ էր ծիծաղում:

Հավելական հարաբերութեամբ կարող են կապվել ամենատարբեր կառուցվածքի ինքնուրույն նախադասութիւններ: Երբեմն էլ տարբեր կաղմութիւն ունեցող առանձին նախադասութիւններ միանալով ստեղծում են խոսքի ամբողջական մաս, հատված՝ արտահայտված հավելումների հաջորդական շղթայով.

Ես վաղուց վարժվել եմ ուշադրութիւն շարժնել այն ժամանակին, որ ուրիշինն է և ոչ թե իմը: Դու էլ ... Մյուսներն էլ ... Ու վարժվել ենք նաև ոչ միայն շնկատել ուրիշների համար յոյժան արագ անցնող ժամանակը, այլև այն ամենը, ինչ կատարվում է աշխարհում (ՆՄԴ):

Այսպիսի հաջորդական միացումներով հավելական հարաբերութիւն կարող է դրսևորվել ոչ միայն շարահյուսական բարդ ամբողջական միավորի ներսում, այլև խոսքի առանձին հատվածների, պարբերութիւնների, մասերի ու գլուխների միջև:

Հավելումների կառուցվածքային տեսակների առանձնացման ելալիստային մյուս հատկանիշը հենց հավելվող միավորների կաղմութիւնն է:

Ըստ այդմ էլ կարող է հավելվել բառ.

Ես Դիկի հետ պետք է գնամ, ձիով (ԼԵ): Ուրիշ ոչ մեկի՝ ինքն իրեն է խաբում: Եվ անգործութունից (ՄԳ):

Կարող է հավելվել բառակապակցութիւն: Որպես այդպիսիք կարող են հանդես գալ ինչպես անվանական, այնպես էլ բայական, կապական բաղադրիչներով և այլ խոսքի մասերով կաղմված բառակապակցութիւններ:

Ծառուկանը պահարանից լիմոն հանեց: Մեկ հատ (ՀՄ): Եվ հանկարծ պառավը, բարձր ու սուր ձայնով, երգեց մի հին երգ: Սիրային երգ (ԶԿԱՄ): Ես քեզ շատ եմ հարգում: Քո տղամարդկութեան համար: Մաքուր արտիդ համար:

Կարող են հավելել և ամբողջական նախադասություններ՝ ինչպես պարզ, այնպես էլ բարդ։ Առօրյա խոսքում հատկապես տարածված են պարզ նախադասության հետ համընկնող հավելումները։

Մտողներ շուներ։ Քույր ու եղբայր էլ շունեք։ Թե մածոն ունես, տուր։ Համ էլ քեյ գցիր (ԲԱՄ)։ Անծանոթը ծպտաց։ Նաև մտերմաբար աշխույժ արեց (ՆՄԴ)։

Ասվածն էլ բավական է համոզվելու համար, որ հավելումներն աչքի են ընկնում ոչ միայն ամենատարբեր կառուցվածքներում հանդես գալու և խոսքի տարբեր միավորների կապակցելու հատկությամբ, այլև իրենք կարող են ունենալ տարբեր կառուցվածք։

բ) Հավելումների տեսակներն ըստ հիմնական մասին միանալու միջոցի. — Հավելումների և հիմնական արտահայտության շարահյուսական կապը դրսևորվում է երկու ձևով.

— շաղկապներով կամ շաղկապական բառերով,

— շարահարությամբ։

Ըստ այս ձևերի էլ առանձնանում են հավելական կառույցների երկու մեծ խմբեր՝ շաղկապավոր և անշաղկապ։

Անշաղկապ հավելումների գլխավոր առանձնահատկությունը երկվում է հենց անվանումից, այն է՝ դրանք հիմնական մտքին միանում են առանց շաղկապների։ Այս դեպքում որպես միացման միջոց գրեթե խավորապես հանդես են գալիս իմաստային և հնչերանգային հատկանիշները (գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրական նշանները)։

Անշաղկապ հավելական կառույցներն ավելի են շեշտում հավելական հարաբերությունը։ Դրանց միջոցով ընդգծվում է հավելվող մասի նշանակությունը, տրամաբանորեն առանձնացվում։ Արտահայտականության, հուզականության տեսակետից էլ սրանք գերադանցում են շաղկապավորներին։ Անշաղկապ հավելումները մեծ մասամբ դրսևորվում են որպես թերի նախադասություն՝ արտահայտված տարբեր անդամներով կամ դրանցից կախում ունեցող բառերով։

Հնչերանգային ու ռիթմամեղեդիական կողմով անշաղկապ հավելական կառույցները գրեթե ձեռք են բերում ինքնուրույն նախադասության արժեք, բայց իմաստային տեսակետից դրանք գրեթե անհասկանալի են լինում առանց հիմնական մասի, որով էլ հենց պայմանավորված է նրանց նշանակությունն ու քերականական կառուցվածքը։

Բաղմազան ու տարաբնույթ են անշաղկապ հավելումներն ինչպես կառուցվածքով, այնպես էլ արտահայտած նշանակությամբ և ըստ այդ նշանակությունների էլ դրանք բաժանվում են տարբեր տեսակների։

Օրինակներ. Երգ էր որոնում: Հոր սիրած երգը (ՎՊԴԱ): Վաղը
չեթօրին սպասում եմ քեզ: Մեր տանը: Դուք գայլ չէ, մարդ էլ եք
խեղդում: Դու և հերդ (ՀՄ): Բոլորը նման էին այդ մարդուն: Բոլոր որ-
բերը (Գ, 1975, 11): Ծուռ Մաթեն կախվել է: Գերեզմանոցում: Դըստ-
րիկի գերեզմանի մոտ (ՍՎ):

Անշաղկապ հավելական կառույցները ամենից առաջ ստեղծվել և
գործածվել են բանավոր խոսակցական լեզվում: Ընդ որում, առօրյա
խոսքին դրանք ավելի են բնորոշ ու հատկանշական, քան շաղկապա-
վորները, և դրանց լայն մասշտաբի կիրառությունները ժամանակակից
գրական հայերենում բացատրվում են մի կողմից այդ կառույցների ակ-
տիվությամբ, իմաստային ամենատարբեր հարաբերություններ ու ոճա-
կան տարաբնույթ հատկանիշներ դրսևորելու ունակությամբ, մյուս կող-
մից՝ խոսակցական, բանավոր և գրավոր լեզվի սերտ մերձեցմամբ:

Որպես առօրյա խոսքին բնորոշ իրողություններ, անշաղկապ հա-
վելումները դեռևս հնագույն ժամանակներից մեծ կիրառություն ունեն
թողովրդական ստեղծագործության տարբեր ժանրերում ու նմուշներում՝
հեքիաթներ, զրույցներ և այլն: Դրանց օգնությամբ մի դեպքում կա-
տարվում է գնահատություն, արտահայտվում է վերաբերմունք, տրը-
վում է՝ որևէ լրացուցիչ բացատրություն:

Տեսնում է մի սիրուն աղջիկ նստած. իսկ և իսկ իր դանակի վրա-
յի նկարն է, որ կա (ՀԺՀ): Յոթն օր, յոթ գիշեր հարսանիք են անում.
ինչ քեֆ, ինչ ուրախություն, ինչ դափ ու զուռնա (ՀԺՀ):

Իսկ մի այլ դեպքում հիմնական արտահայտության մեջ նշվում է
որևէ գործողություն, տեսողական կամ լսողական որևէ ընկալում, իսկ
հավելվող մասով տրվում է այդ ընկալման բովանդակությունը, էու-
թյունը, կամ այդ գործողության հետ կապված որևէ փաստ, հանգա-
մանք.

Դավիթ մտավ էդ քարայր, Փետ մի զարկեց. մեկ էս քարին, մեկ
էն քարին (ՍԴ): Տղան գնում է, գնում, մեկ էլ տեսնի ինչ. մի բարձր
տեղ մի լույսի կտոր աղջիկ է կանգնած (ՀԺՀ):

Նման օրինակները շատ են և գեղարվեստական գրականության
մեջ, որպես առօրյա խոսքի ընդօրինակմամբ առաջացած ոճական հը-
նարքներ: Այսպիսի դեպքերում հիմնական մասում արտահայտված տե-
սողական ընդհանուր նշանակությունը դրսևորվում է տեսնել, նայել,
զննել և նման այլ բառերով, իսկ հավելվող մասում տրվում է նայելու,
զննելու, տեսնելու կոնկրետ օբյեկտը, բովանդակությունը, այսինքն այն,
ինչ դիտվում է, նայվում, զննվում: Դա կարող է լինել անձ.

Պատահաբար տեսա՝ Ճակատային ընկերս էր (ՍԳ): Միջանցքի
կիսախավարում նկատեցի մի կերպարանք: Մեկինն էր (ԳՄ):

Մի այլ դեպքում դա կարող է լինել որևէ իրի, առարկայի, երևույթի մատնանշում կամ նկարագրություն.

Նայում են. առջևում թուրքական դրոշակ է: Ուշադիր զննեց շուրջը. չոր ու ցամաք սենյակ: Պաղ և անհրապույր (ԶԿԱՄ):

Նույնը կարելի է ասել նաև այնպիսի անշաղկապ հավելումների մասին, երբ հիմնական արտահայտության մեջ նշվում է լսողական որևէ ընկալում, իսկ հավելվող մասով տրվում է դրա բացատրությունը:

Միջանցքում ոտնաձայներ լսվեցին: Հերթապահն էր (ԶԽ): Դարձյալ լսեցի ձիու դուփոնը սալահատակի վրա: Նղբայրս էր (ՎԹ):

Երբեմն այդ լսողական ընկալումը դրսևորվում է բնաձայնությամբ, ապա նոր բացատրվում է իրողությունը.

Եվ հանկարծ խոր լուռության մեջ՝ չրխկ, չրխկ, չրխկ ... Մեքենայի ձայնն էր (ԶԿԱՄ):

Շաղկապվում: հավելումների գլխավոր հատկանիշն այն է, որ կապը նախորդ մասի հետ իրականացվում է շաղկապների օգնությամբ: Ընդ որում, որպես միացման միջոց կարող են հանդես գալ և համադասական, և ստորադասական, և բուն հավելական շաղկապներն ու շաղկապական բառերը:

Համադասական շաղկապներն, ինչպես հայտնի է, արտահայտում են համադասական հարաբերություն բառերի, նախադասությունների, խոսք կազմող առանձին հատվածների, մասերի միջև: Հավելական նշանակությամբ գործածվելիս համադասական շաղկապները պահպանում են ընդգրկման այս շրջանակները, այսինքն նրանց միջոցով հավելական հարաբերությունը նույնպես դրսևորվում է թե նախադասության անդամների, թե նախադասությունների, թե խոսք կազմող հատվածների, մասերի միջև:

Հավելական միավորներ կապակցող համադասական շաղկապներն մի մասը համեմատաբար ակտիվ է ու գործուն, հավելումների հետ հաճախ է հանդես գալիս, ունի գործածության լայն ոլորտներ: Բայց մի մասը շունի այդպիսի ակտիվություն և կիրառության ավելի նեղ շրջանակներ է ընդգրկում: Բայց ժամանակակից հայերենում նկատվում է համադասական շաղկապներով հավելումների կիրառության ոլորտների ընդլայնման միտում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ և, ու, իսկ ակտիվ շաղկապների կողքին գնալով ավելի է բացահայտվում բայց, սակայն, կամ շաղկապների ներքին պոտենցիալ ակտիվության հնարավորությունը, և վերջիններս աստիճանաբար ավելի հաճախ են կիրառվում հավելական միավորների հետ:

Համադասական շաղկապներով հավելական կառույցներն ունեն ամենատարբեր և բազմապիսի նշանակություններ: Այդ նշանակություն-

ները կարող են հանդես գալ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասնաբար, տարբեր հարաբերությունների ներթափանցումներով և հաճախ անհնար է լինում դրանց միջև որոշակի սահմանագիծ անցկացնել: Բայց բազմազանությամբ հանդերձ այդ նշանակություններն ունեն մեկ ընդհանրություն. դա այն է, որ բոլորն էլ, վերջին հաշվով, արտահայտում են հավելական հարաբերություն: Սակայն շաղկապներով միացած կառույցների այս ընդհանրությունը չպետք է տարածել շաղկապների նշանակությունների վրա: Ինչքան էլ և, ու, իսկ, բայց, սակայն, կամ շաղկապներով կառույցներն ընդհանրապես մեկ՝ հավելական նշանակությամբ, այնուամենայնիվ և, ու շաղկապներն իրենց ընդհանուր հատկանիշով միավորիչ շաղկապներ են, իսկ, բայց, սակայն շաղկապները՝ ներհակական, կամ-ը՝ տրոհական:

Ստորադասական շաղկապները հավելական նշանակությամբ գործածվելիս կարող են կապակցել բարդ նախադասության բաղադրիչները, այսինքն՝ հանդես գալ բարդ միավորի կազմում: Սակայն ստորադասական շաղկապներով միացած կառույցները հավելական նշանակություն են ստանում հատկապես իրենց առանձնացվածության, գլխավոր նախադասությունից տեղական դադարով անջատված լինելու շնորհիվ: Խոսակցական լեզվում այդ անջատվածությունը դրսևորվում է համապատասխան հնչերանգով, ձայնի բարձրության, խոսքի տեմպի համապատասխան փոփոխություններով, իսկ գրավոր խոսքում՝ վերջակետի, միջակետի կամ կախման կետի միջոցով: Հենց սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ստորադասական շաղկապներով հավելական կառույցները հիմնականում հաջորդում են վերջակետին, դրվում են նրանից հետո:

Այս կապակցությամբ պետք է ասել նաև հետևյալը. թվում է, թե բոլոր ստորադասական շաղկապներն էլ կարող են հանդես գալ որպես հավելական կառույցների միացման միջոց՝ դրվելով վերջակետից հետո: Սակայն լեզվում այսպիսի համընդհանուր դիժ չկա: Դա պարզապես վկայում է, որ այս շաղկապները հավելումների հետ գործածվելու պոտենցիալ մեծ հնարավորություններ ունեն:

Ստորադասական շաղկապներով հավելական կառույցները հավելման նշանակության հետ միասին կարող են դրսևորել այլ հարաբերություններ ևս (ժամանակային, պատճառահիմունքային, նպատակի, զիջական և այլն), որը բխում է շաղկապների բուն իմաստից:

Հավելումների հետ գործածվելու տեսակետից ստորադասական շաղկապները նույն արժեքը չունեն: Մի խումբ շաղկապներ (որ, եթե, երբ, քանի որ, որովհետև և այլն) ավելի հաճախակի են հանդիպում և ավելի շատ կիրառություններ ունեն, քան մյուսները: Այս շաղկապներն

առանձնանում են նաև իրենց բնույթով: Դրանց մի մասը շատ ավելի հատուկ է խոսակցական լեզվին, իսկ մյուսները գերազանցապես գրքային բնույթ ունեն:

Հավելական կառույցների իմաստային բազմազանությունը, ոճական, գործառական և քերականական առանձնահատկությունները հիմք են հանդիսացել, որպեսզի լեզվում աստիճանաբար առանձնանա ոչ միայն շաղկապների, այլև առանձին բառերի որոշակի խումբ, որը ծառայում է հավելական հարաբերություն արտահայտելուն:

Այդ խումբը կարելի է բաժանել երկու մասի. ա) բուն հավելական շաղկապներ, բ) շաղկապական արժեք ունեցող լեզվական այլ միջոցներ:

Բուն հավելական շաղկապները նրանք են, որոնց իմաստային, ոճական և գործառական հիմնական արժեքը հավելական հարաբերություն արտահայտելն է, այսինքն դրանք բացառապես հանդես են գալիս հավելական կառույցների հետ և այլ կիրառություն գրեթե չունեն:

Բուն հավելական շաղկապները բավական շատ են, դրանց միջոցով կարող են ձևավորվել տարբեր տեսակի հավելական կառույցներ՝ օժտված իմաստային և գործառական տարաբնույթ հատկանիշներով: Այս երևույթը դիտարկենք միայն էլ շաղկապով կառավարված հավելումների օրինակով:

Այս շաղկապով միացած կառույցները ցույց են տալիս փաստերի, իրողությունների, մտքերի հավելում: Ինչպես.

Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ (ԲԱՄ): Թրջված տեղերը դարձել են թափանցիկ ու շողում են: Այտերն էլ են շողում, բաց թևերն էլ (ԲՀ): Ինչ նախշուն ուսեր ունես, Մերի, երեսդ էլ է նախշուն, բոյդ էլ (ՍԽ):

Այս շաղկապով կառույցների տարածված կիրառություններից է այն դեպքը, երբ հիմնական արտահայտության որևէ անդամը կրկնվում է, և հավելվող փաստերը հանդես են գալիս որպես այդ կրկնվող անդամի հետ անբաժանելիորեն կապված միասնություն:

Նա չուխան շպրտեց, չուխայի հետ էլ՝ ավելորդ մտքերը: Վիրավոր արջի ամբողջ ղայրույթով իրեն է քաշել գանգի մորթին, մորթու հետ էլ գլխի մազերը, ունքերը, աչքերը (ԲԱՄ):

Միայն այդ շաղկապի կրկնությամբ երբեմն ստացվում է տարբեր հավելումների մի հաջորդական շղթա, որը կարող է լինել ինչպես որևէ ամբողջական միտք, այնպես էլ որևէ նկարագրություն, պատկեր:

Ընտանիքով՝ կինն ու երեք երեխան նստած, սար էին բարձրանում, խուրջինն էլ տակները. վառարանն էլ կողքից կախած. հավերն էլ

Թամբից կապած (ՀՄ): Դու մեզնից վարժ ես կարդում, լավ էլ ձայն ունես ... Դու տերտեր էլ կդառնաս, վարդապետ էլ կձեռնադրվես (ՍՀԱ):

Շատ բնորոշ է այս շաղկապի կրկնության միջոցով թվարկում արտահայտելը, մի բան, որ շատ ցայտուն է երևում խոսակցական լեզվում կամ այդ ոճի գրական ստեղծագործություններում: Ընդ որում, միայն այսպիսի կիրառությունների ժամանակ է էլ շաղկապը դրվում կառուցից կամ նրա շեշտված անդամից առաջ:

Գալիս են ու էս տունը պահում. էլ արջեր, էլ գայլեր, էլ փղեր, էլ աղվեսներ, ո՞ր մեկն ասեմ (ՀԺԲ):

Էլ շաղկապը ազատորեն գործածվում է նաև հարցական ու ժխտական կառույցներում: Սերտորեն միանալով ժամանակ, տեղ, չափ, քանակ, ձև և այլն ցույց տվող բառերին, այն շեշտում է տվյալ իմաստը:

Էլ-ը օժտված չէ այլ շաղկապների հետ ազատորեն միանալու հատկությամբ: Այդ տեսակետից այն չեզոք է: Թերևս բացառություն է կազմում կամ շաղկապի հետ համատեղ գործածությունը (կամ էլ), այն էլ թվարկումների ժամանակ: Սակայն պետք է ասել, որ էլ շաղկապը մեկ թվականի հետ ոչ միայն հաճախակի հանդիպում է առօրյա խոսքում, այլև գրական լեզվում, և դրանց այդ համատեղ գործածությունը (մեկ էլ) կարծես ինքնուրույն շաղկապական արժեք է ձեռք բերել: Օրինակներ.

Կյանքս արդեն անցել է, ինձ մնում է միայն աղջիկներիս վրա ուրախանամ, մեկ էլ նրանց հարսանիքին պար գամ (Գ): Լուսթյունը խանգարում էին ճագարները միայն, մեկ էլ արտույտների երգն էր լսվում (ՍԳ):

Ահա, ընդամենը մեկ շաղկապ, բայց որքան տարատեսակ կիրառություններ (ընդ որում դիտարկված են ոչ բոլորը): Այսպես են նաև հավելական մյուս շաղկապները:

Ընդհանրապես խոսակցական և գրական լեզուներում հավելական շաղկապները կարծես յուրատեսակ բաշխվածություն ունեն: Օրինակ, առօրյա խոսքին առավել բնորոշ են էլ, ճախ, համ էլ, մեկ էլ, այն (էն) էլ, ինչպես և և այլ շաղկապներ: Այդ է վկայում նաև ժողովրդական բանահյուսության մեջ դրանց առատ գործածությունը: Այսպես.

Ժողովրդական շատ հեթաթյաների, զրույցների ու առակների վերջաբանը հաճախ է արտահայտված լինում այդ շաղկապներով միացած հավելումներով, որոնք հանդես են գալիս որպես ամփոփում, ընդհանուր դատողություն, եզրահանգում, հեթաթի, զրույցի կամ առակի ամբողջ իմաստից բխող օրելիտիվ միտք կամ հետևություն.

Դրա վերջն այդ է: Եվ իզուր չի ասված՝ ագան մարդու աչքը մի բուռ հողը կկշռացնի. (ՀԺԲ): Հարս ու փեսին տանում են իրենց տուն,

նորից քեֆ անում, ուրախանում: Դուք էլ ուրախանա՛ք, ձեր մուրազին հասնե՛ք (ՀԺՀ):

Այս շաղկապների խոսակցական բնույթը պարզ երևում է նաև հետևյալ ծրինակներից.

Ես գուժանի խոփի գորությունը չգիտեի, համ էլ մայրդ ասաց, ես էլ տվեցի (ՀԺԲ): Ունենում է մի տղա, մեկ էլ մի աղջիկ. երկուսն էլ մեկմեկուց աննման, սիրուն (ՀԺՀ): Սրանց ունեցածը մի հավ է լինում, էն էլ էն տեսակ հավ, որ առջևից գնացողին կտցով էր տալիս, հետևից եկողին՝ քացով: Բազավորը շատ գոհ մնաց, ամեն տեսակ նըվերենք տվեց, մի պարկ էլ ոսկի բաշխեց (ՀԺԲ):

Իսկ գրական լեզվում շատ են տարածված ևս, այլև, նույնպես և, նմանապես և, ինչպես ... այնպես և, ինչպես .. նույնպես և, ոչ միայն ... այլև, ոչ միայն ... այլ նաև, և այն (էլ), ինչպես նաև և այլ շաղկապնե՛ր:

Շաղկապներից բացի հավելական կառույցների միացման միջոցի դեր կարող են կատարել նաև այլ խոսքի մասերը:

Աշունը մեզ մոտ սքանչելի է: Սքանչելի իր գույներով, բերքով, շռայլությամբ (ՄՀ): Մեծ, թե փոքր գիրք էին կարդում: Կարդում էին լարված ու կենտրոնացած (ԶԿԱՄ):

Առաջին օրինակում կապակցման միջոց է ածականը, երկրորդում՝ բայը: Սակայն, ինչպես նկատվում է, այստեղ մեծ դեր է խաղում կըրկնությունը, իսկ կրկնությամբ հավելական կառույցներ կարող են կազմել գրեթե բոլոր խոսքի մասերը, և այդպիսի կիրառությունների մասին հարկ չկա մանրամասն խոսելու: Մեզ հետաքրքրում են այնպիսի խոսքի մասերն ու լեզվական միջոցները, որոնք հավելական կառույցներ են կազմում առանց կրկնության և առանձին վերցրած էլ ունեն. հավելում, ճշգրտում կատարելու հատկություն:

Այս առումով խոսակցական լեզվում առանձնանում են որոշ դերանուններ ու եղանակավորող բառեր, մի քանի միջանկյալ կապակցություններ, կայուն արտահայտություններ և այլն: Օրինակներ.

Տխուր էր Արփենը, որից ավելի գեղեցիկ էր երևում (ՍԽ): Ցից ես հանում ամեն գուլից տաս հոգի: Զոկել պետք չէ: Որպես պատիժ, որ խրատվեն (ԱՃՀ): Մի սենյակ լիքը երաժշտություն էր: Իհարկե, նաև հայկական (ՎՊԴԱ): Հենց այստեղից էլ՝ Նադիմից, գազը հասավ Մոսկվա: Անշուշտ, ոչ անմիջապես քաղաքից (Գ): Դու թատերական նկարիչ չես, դու դերասան ես: Ասենք, մենակ դու չէ, քո հայրն էլ է դերասան, մայրն էլ (ԳԹ): Այսպես, ուրեմն, ի՞նչ էի պատմում ... Հա, կնկաս մասին: Տեսավ նկարը: Ավելի ճիշտ տեսավ ինքն իրեն, երբ տասնչորս տարեկան էր (ՆՄԴ): Զէինք շտապում: Ավելի շուտ ընկերս

չէր շտապում (ՍԳ): Ինչ ուզում է լինի, թեկուզ շընդունվեմ: Ընդունա՞ծ, թվում է, որ կընդունվեմ (ՎՊԴԱ):

Իսկապես բազմազան են հավելումների միացման միջոցները, և խոսքը մանրամասնելու կարիք չկա:

գ) Հավելումների տեսակներն ըստ շարահյուսական դերի. — Այս դեպքում հաշվի է առնվում դրանց կատարած շարահյուսական պաշտոնը ընդհանուր կառուցվածքում, այսինքն՝ հավելումը ենթակա է, ստորոգյալ, թե՞ երկրորդական որևէ անդամ, անկախ նրանից՝ այն արտահայտված է բառով, բառակապակցությամբ, թե ամբողջական նախադասությամբ: Այդ պատճառով էլ դրանց շարահյուսական պաշտոնը որոշելու համար նկատի է առնվում հիմնականում դրանց բնութագրական մասը:

Ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել երկու տեսակ.

1) Հավելական կառույցներ, որոնք գլխավոր անդամի դեր են կատարում (ենթակայի կամ ստորոգյալի):

2) Հավելական կառույցներ, որոնք հանդես են գալիս երկրորդական անդամի պաշտոնով:

Նախ քննենք գլխավոր անդամների շարահյուսական դեր կատարող հավելումների տեսակները:

Հավելվող մասում կարող է արտահայտված լինել միայն ենթական. Բաժակաճառ ուղում էին ասել ամենքը, նույնիսկ՝ կանայք (ՎՊԴԱ): Գործիսեցիք էլ էին մատաղ անում, մինչև անգամ կալադարանց Հերսելյան (ԲԱՄ):

Երբեմն ենթակայի հետ միասին լինում են նաև նրա լրացումները.

Սով ու սարսափ տեսած մարդկանց աչքերի մեջ երջանկություն կար. բայց և խոր հոգնածություն (ԱԱՄ): Նապաստակի միսը կերան ոչ միայն Արմենը, ոչ միայն հաշվապահը, այլև գաղանանոցի բոլոր գաղանները (ԶԿԱՄ):

Բազմակի ենթակաների տարանջատումը, առանձնացումը հաճախ դառնում է ենթակայի դերով հանդես եկող հավելական կառույցի առաջացման պատճառ.

Հպարտությունը թույլ չէր տալիս նրան այդ անելու: Եվ անվիճելի իրավացիությունը (ՌՀՀ): Անտառում արջեր կան, վարազներ էլ, բորենիներ էլ (ՍԽ): Դեմքի վրա պարզորոշ նկատվում էր դժգոհությունը: Նույնիսկ վրդովմունքի արտահայտությունը (ՍԳ):

Համեմատաբար քիչ են այնպիսի կիրառությունները, երբ հավելվող կառույցը դրսևորվում է նախորդ մասի հիմնական, շարտահայտված ենթակայով: Նման դեպքերում հավելումը իմաստային մեծ շեշտ-

վածութիւնն է ստանում և վերականգնում ու ձևավորում է նախորդ արտահայտութիւնը ինչպես բառային, այնպես էլ քերականական ամբողջականացման տեսակետից:

Ակամա ոտքի կանգնեցին: Եվ պաշտպանողները, և չպաշտպանողները (ՄԳ):

Անօրջա խոսքում ավելի տարածված են ստորոգյալի դեր կատարող հավելումները. դա կապված է բայ-ստորոգյալի՝ խոսքի մեջ ընդհանրապես իմաստային ծանրաբեռնվածութիւնն ունենալու հանգամանքի հետ: Հավելվող մասում կարող է լինել միայն ստորոգյալը.

Կախվել էր իշխանի գոտուց ու ճոճվում էր: Ու շողում, շողշողում էր (ՀՄ): Այսօր նա գտնվում էր անծանոթ թաղամասում: Մտազբաղ էլ էր: Նա իմ տատը չէր: Աղգական էլ չէր (ՍՎ):

Ստորոգյալի հետ միասին հաճախ կարող են հանդես գալ նաև նրա լրացումները.

Եվ մարդ ուզում էր անառակ ու գեղեցիկ լինել: Խաբեր ու ծիծաղեր: Ձեռքերը կոնքերին կանթած ծաղրեր (ՀՄ): Մեր նախագահը շատ է ծերացել արդեն, չեմ կարողանում նրան բան հասկացնել: Եվ այնքան էլ կամակոր է:

Հավելվող կառույցը կարող է արտահայտվել նաև բազմակի ստորոգյալներով.

Շատ մտախոհ էր, շատ: Եվ մռայլ էր, բարկացած (ԱԵԶ): Նազիկը հալալ կաթնակեր, խոնարհ, նամուսով հարս կլինի: Եվ սիրուն է: Ի՞նչն է պակաս: Եվ աշխատասեր է (ՄԳ):

Ավելացնենք նաև, որ ստորոգյալի պաշտոն կատարող հավելումները կարող են դրսևորվել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ստորոգյալի միջոցով, որ հավելվող մասի ստորոգյալը իր ժամանակային ձևով կարող է համընկնել հիմնական արտահայտութեան ստորոգյալին (այսինքն՝ ցույց տալ միաժամանակութիւն) և կարող է արտահայտվել այլ ժամանակային ձևով (այսինքն՝ ցույց տալ տարժամանակութիւն), հատկութիւններ, որոնք պարզ երևում են վերը բերված օրինակներին:

Ասվեց, որ հավելումների շատ տեսակներ կարող են կատարել նախադասութեան երկրորդական անդամի դեր: Այսպիսի հավելումներն անհամեմատ ավելի շատ կիրառութիւններ ունեն և ընդգրկում են գործածութեան ավելի լայն շրջանակներ, քան ենթակա և ստորոգյալ հավելական կառույցները:

Նախադասութեան երկրորդական անդամի պաշտոն կատարող հավելումները կարող են լինել թե՛ անվանական, թե՛ բայական անդամի լրացում:

Դիտարկենք այդ դեպքերը:

Հավելվող մասը կարող է կատարել որոշչի պաշտոն.

Հեծանիվներ էին անցնում: Առանց հեծանվորդների: Դեղին գույնի, երկաթավուն, ձիգ (ԶԿԱՄ): Հիմա Բեթհովենով էր տարված: Ֆյուրտվոնգերի կատարմամբ (ԱԱՄ): Կովի վայրը գետն էր: Հին ճանապարհի տակով անցնող գետը: Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում, Մուֆ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր (ԾԶ):

Հավելվող կառույցը կարող է լինել հատկացուցիչ.

Եվ արդեն տանն էր: Իրենց տանը: Իրենց օջախում (Գ): Բայց սա էլ արյուն թափել է նշանակում, այն էլ արյունակցի արյուն, հայրերի արյուն (ԱՃՀ):

Որպես հավելում կարող է հանդես գալ նաև բացահայտիչը.

Դրանով արջ սպանե՞լ կլինի,— ասաց Գևորգը՝ դասատուն,— էդ մահակով (ՀՄ): Կնիկդ ինձ ատելով ատում է: Կոլեծսկի ռեգիստրատորիս (ԱՇ): Ձեզ եմ դիմում, կապուտանցի այրեր: Դիմում եմ ես: Կարճիկ Մաջոս (ՆՄԴ):

Բերված օրինակներում ակնհայտ է այն տարբերությունը, որ կա սովորական բացահայտչի և հավելման կարգով արտահայտված բացահայտչի միջև: Սովորական բացահայտիչը դրվում է բացահայտյալից անմիջապես հետո և տրոհվում բուժով, մինչդեռ երկրորդ դեպքում բացահայտիչն առանձնացված է բացահայտյալից, իսկ բացահայտումը կատարվում է հավելական երանգով:

Հմտ.՝ Դրանով՝ էդ մահակով, արջ սպանե՞լ կլինի:

Մասնական բացահայտիչը նույնպես երբեմն առանձնանում է՝ դառնալով հավելում.

Ուղարկեցին մեզ: Իբրև անբաժան օգնականների (ՍԳ): Հարձակվեցին ինձ վրա: Որպես օրենքի ներկայացուցչի (ԶԿԱՄ):

Բավական մեծ է այն հավելումների թիվը, որոնք կատարում են խնդրի շարահյուսական դեր, ընդ որում դա վերաբերում է թե ուղիղ, թե անուղղակի խնդիրներին:

Ահա ուղիղ խնդրով արտահայտված հավելման օրինակներ.

Ես իմ ուրախություններն ու հույզերն եմ շարում: Նաև արցունքները (ՎՊԴԱ): Արտասուքի այդ շիթերն այրում էին ոչ միայն այտերը, այլև սիրտը, դառնացած հոգին (ՍՎ):

Իսկ անուղղակի խնդրով դրսևորվելու դեպքում հավելվող կառույցը կարող է ցույց տալ վերաբերություն (Ես ծածկում եմ գիրքը, մտածում: Տղայի մասին: Եվ մանավանդ՝ հոր (ՎՊԴԱ), միջոց (Հանդիսատեսին պետք է գրավել ոչ թե բառերով, այլ հենց պրոցեսով: Մտքերով, խոհերով, չարտահայտվածի ամբողջ բովանդակությամբ (Գ), անջատում (Այս ամենից ձանձրացել էր: Այս քաշքշուկից ու բամբասանքնե-

րից (լե), հանգում, մատուցում (վերջում պարգևներ հանձնեցին: Նախ աշխատանքի վերանային, ապա առաջավոր երիտասարդներին) և այլն:

Հավելումները հաճախ են հանդես գալիս նաև որպես պարագաներ: Եվ ինչքան բազմազան են պարագաները, այնքան էլ բազմազան են դրանց պաշտոնը կատարող հավելումները թե իրենց բնույթով, թե կիրառությամբ:

Ըստ այդմ էլ հավելվող մասը կարող է լինել ձևի պարագա.

Պատրաստ են լուրը քննարկելու: Եվ մեծ սիրով: Եվ հեկեկաց: Ուրախ ու հուսահատ, երջանիկ ու վշտաբեկ (ՍՎ): Պարեց: Անվստահ ու անճարակ: Ձեռքերի ու ոտքերի պատահական շարժումներով (ԶԿՄ):

Կարող է լինել ժամանակի պարագա.

Վաղը տանն եմ լինելու: Առավոտից: Մրգահյութից նա մի կում էր արել միայն, այն էլ գրեթե երեք ժամ առաջ (ՆՄԴ): Պարագործսալ է թվում այդ դուգակցությունը, բայց կա, գոյություն ունի: Շուրջ կես դար (ՀԱ):

Հավելվող մասը կարող է կատարել նաև տեղի պարագայի պաշտոն.

Ինձ համար քնել էի: Հենց աթոռին: Ի՞նչ խորդախություն կարող էր լինել անմեղ թռչունների սիրային պայքարում, այն էլ օդում (ՎԹ): Երբ գնացին թեյի կանչելու ագգում չէր: Գոմում էլ չէր (ՀՄ): Ինքն ամենաբարձր տեղում էր: Կաղնու ծառին:

Որպես պարագա հանդես եկող հավելական կառույցները կարող են ցույց տալ նաև միասնություն (Ես մի փոքր գործ ունեմ ձեր ընկերոջ հետ: Ձեզ հետ էլ (ՆՄԴ), պայման (Օ, ինչպիսի հաճույք կստանա... Եթե այլանդակի նրան: Վիրավորի նրա պատիվը (ՌՀՀ), նպատակ իսկ հիմա ես ձեր աչքերի լույսը կհանեմ, որ դուք ապրեք ու տանջվեք: Որ խառնակիչները տեսնեն, թե դուք ինչպես եք խարխալում (ԱՀՀ) և այլն:

Ներկայացված նյութը մեկ անգամ ևս հաստատում է, որ հավելումները խոսքի մեջ կարող են ունենալ շարահյուսական տարբեր դերեր, և եթե զխավոր անդամների պաշտոն կատարող հավելական կառույցները համեմատաբար սահմանափակ կիրառություն ունեն, ապա երկրորդական անդամի պաշտոնով հանդես եկող կառույցները ավելի շատ են տարածված, ունեն դործածության լայն շրջանակներ:

դ) Հավելումների տեսակներն ըստ արտահայտած իմաստի և դրսևորած շարահյուսական հարաբերության. — Իմաստային տեսակետից որպես հավելում հանդես գալը, հավելական հարաբերություն արտահայտելը հավելական կառույցների իմաստային ընդհանուր հատկանիշն է: Սակայն ըստ արտահայտած իմաստի և հարաբերության դրանց դա-

սակարգումը կատարելիս այս ընդհանուր առանձնահատկությունը պետք է դիտարկել երկու տարբեր կողմերից:

1. Մի դեպքում պետք է հաշվի առնել այդ հավելման բնույթը, այսինքն՝ ինչ է իրենից ներկայացնում հավելվող մասը. այն բովանդակում է լրացուցիչ միտք, փաստ, մանրամասն, կարևոր տեղեկություն է հաղորդվում, թե տրվում է ասվածի գնահատությունը, արտահայտվում է խոսողի վերաբերմունքը, թե կատարվում է ասվածի ամփոփում, ընդհանրացում:

Ըստ այս մոտեցման տարբերակվում են.

ա. լրացուցիչ միտք, իրողություն, մանրամասն հաղորդող կամ ասվածի ճշգրտում կատարող հավելումներ:

Տե՛ր ես մինչև ի մահ: Հնազա՞նդ ես մինչև ի մահ: Դժբախտության դեպքում, փորձանքի, հիվանդության: Թշվառության ու ձախորդության: Աղետի ու աքսորի (ԶԿԱՄ): Զենքերը հանձնեցին դաղթող խմբերում գտնվող երիտասարդներին: Տասը մաուզեր (ԱԵԶ): Սրանք մեր գորգուղիներն են: Իջևանի արտադրանքը (ՄԳ):

բ. կարևոր տեղեկություններ բովանդակող, կարևոր հանգամանքներ բացահայտող հավելումներ.

Կապույտ արևով կալանավորը միայն մի ձգտում ուներ: Եվ ազատություն էր դա (ԶԽ): Նա մենակ է հիմա: Եվ մենակ է հենց իր մեղքով (ՆՄԴ): Դեռ հեռվից ճանաչում եմ նրան: Ծանաչում եմ քայլվածքից: Զեռքը գոտու վրա պահելու սովորությունից (ԲՌ):

գ. վերաբերմունք, գնահատություն արտահայտող հավելական կառույցներ.

Այլևս չէր տնքում, ոչ էլ օրորվում էր, և դա ինձ ուրախացրեց (ՀԱ): Գյուղի վրա իջնում էին այծերի ու ոչխարների հոտերը: Եվ ինչ աշխույժ աղմուկով, ինչպիսի զվարթությամբ (ԲԱՄ): Նա կուկիցիոներ էր և զվարճանքի սիրահար: Երկուսն էլ թանկ հաճույքներ (ՄՆ):

դ. ընդհանրացում, ասվածի ամփոփում կատարող հավելական կառույցներ.

Ես էլ ասում եմ ինչու՞ է հնձածներս քիչ: Պավլեն չկա. այ թե ինչու է քիչ (ՀՄ): Գնացել է: Շուռ է եկել ու գնացել: Սովորական մի բան: Անտարբերություն: Եվ, ինչպես ասում են, դարիս հիվանդություն (Գ):

2. Մյուս դեպքում պետք է հաշվի առնել հենց հավելվող մասի իմաստային նշանակությունը և միացող կառույցների միջև դրսևորված հարաբերությունը:

Այսպիսի մոտեցմամբ էլ մի կողմից կունենանք համադասություն կամ ստորադասություն արտահայտող հավելական կառույցներ, այ-

սինքն հիմնական արտահայտության և հավելվող մասի միջև դրսև-վորված շարահյուսական հարաբերությունը կարող է լինել համադասա-կան կամ ստորադասական: Օրինակներ.

Եվ կհարցնեմ ձեր որպիսությունը, նաև ինձ բարի հիշողաց ... (Համադասություն, ԲԱՄ):

Դժգոհ չեմ: Թեկուզ և կտրվեցիր ընդունելության քննություննե-րից (Ստորադասություն, ՄԳ):

Մյուս կողմից էլ կարող ենք առանձնացնել համեմատություն (ինչ-պես որ խոսում ես, այնպես էլ պիտի գրես, էլի), պայման (Բարձրա-ձայն կկարդաս այն, ինչ ես հիմա կգրեմ: Միայն լսելի ու պարզ (ՄԳ), պատճառ (Սրճարանը տեղավորված է փողոցի մակերեսին հավասար, և դրանից էլ այստեղից վատ եմ տեսնում հրապարակը (ԲԲ), ճպտակ (Ստիպված է ինքը գնալու Որ անձամբ տեսնի (ՌՀՀ), ձև (Եվ պատ-մեց այդ ծերացած կինը: Առանց արցունքների, աչքերում՝ անտարբե-րություն (ՍՎ), տեղ (Տանը չէր: Գրասենյակում էլ չէր), ժամանակ (Դա էր մեր զբաղմունքը: Ամեն օր: Առավոտից իրիկուն (Աղ.), չափ ու քանակ (Եվ ինչքան շատ կոտորեցին: Շատ: Երկու միլիոն (ԳԹ) և այլն ցույց տվող հավելումներ:

* * *

Այսպիսով, հավելումները որպես խոսքի կառուցման սկզբունք ու դրանով պայմանավորված երևույթներ, բնորոշ են հատկապես առօրյա խոսքին, իսկ գրական, գրավոր լեզվում հանդես եկող հավելումները կապվում են ոչ թե խոսքի կառուցման սկզբունքին, այլ ոճական նշա-նակություն ունեն:

Հավելումների բաղմազանությունը պայմանավորված է հիմնակա-նում այնպիսի էական կողմերով, ինչպիսիք են դրանց կառուցվածքն ու արտահայտած իմաստը, բնույթն ու դրսևորած հարաբերությունը, հիմնական մտքին միանալու միջոցներն ու կատարած շարահյուսական դերը:

4. Բ Ա Ց Թ Ո Ղ Ո Ի Մ

Առօրյա խոսքում բավական գործուն է և բացթողման սկզբունքը: Այն խոսքի կառուցման կարևոր առանձնահատկություններից է և իր բնույթով ամենից առաջ հակադրվում է հավելմանը: Այդ հակադրու-թյունն արտահայտվում է նրանում, որ հավելումները բնութագրվում են խոսքի արդեն պատրաստի ձևակերպումներում լեզվական նոր միա-

վորներին անսպասելի, հանկարծակի ներմուծմամբ, իսկ բացթողումները բնութագրվում են խոսքի մեջ ենթադրվող որոշ կարգի լեզվական միավորների բացակայությամբ։ Ավելի ճիշտ կլինի ասել՝ բացթողումները հաղորդակցության բաղադրության մեջ մտնող, բայց լեզվական դրսևորումներ չստացած երևույթներ են։

Գրական լեզվում նույնպես շատ են տարածված զանազան կարգի բացթողումները, բայց այդ տեսակետից հատկապես աչքի է ընկնում առօրյա խոսքը։ Դա պայմանավորված է իրադրության հետ կապի սերտության աստիճանով։ Լեզվական ուրիշ ոչ մի ոլորտում իրադրությունն այնքան մեծ դեր չի կատարում, որքան խոսակցական լեզվում։ Այս դեպքում իրադրությունն էլ լեզվական միջոցների հետ միասին դառնում է հաղորդակցության լիարժեք բաղադրամասը։ Մեծ մասամբ լինելով արտալեզվական իրողություն, ունենալով ոչ լեզվական արտահայտություն ու դրսևորում, այն կարողանում է հավասարապես փոխարինել լեզվական միջոցներին։

Մինչդեռ գրական լեզվում իրադրությունը այդպիսի մեծ նշանակություն ու գործառույթ չունի։ Հենց սրանից էլ բխում է բացթողումների բնույթի տարբերությունը գրական և խոսակցական լեզուներում։ Եթե վերջինիս համար սովորական է հաղորդակցության իրականացումը խոսքի բաղադրամասը կազմող ամենատարբեր իրադրությունների ոչ լեզվական դրսևորմամբ, այսինքն՝ տարբեր տեսակի բացթողումներով, ապա գրական լեզվի հնարավորությունները այս հարցում այդքան ընդարձակ չեն։

Այս առումով էլ ամենից առաջ դիտարկենք խոսքի և իրադրության փոխհարաբերությունների հարցը և դրանցով պայմանավորված բացթողումները։

Հաղորդակցության բուն գործընթացի համար իրադրությունը կարող է ունենալ եռակի դրսևորում։ Դրանք են.

Ա. խոսքաշար. — Խոսքաշարը որպես իրադրություն կարող է դրսևորվել թե գրական, թե խոսակցական լեզուներում։ Սա իրադրության թերևս պասսիվ դրսևորումներից մեկն է. որպեսզի հասկանալի լինի այս կամ այն մտքի, արտահայտության նշանակությունը, խոսողը ըստիպված է պատմել, նկարագրել այն ընդհանուր միջավայրը, դեպքերի, գործողությունների, եղելությունների այն ընդհանուր ֆոնը, որի ուղեկցությամբ իրականացվել կամ իրականացվում է հաղորդակցությունը։ Պատմելու, նկարագրելու միջոցով էլ խոսողը ստեղծում է հենց իրադրության ընդհանուր պատկերացում, որն էլ լսողին կամ կարդացողին օգնում է իրեն ճշգրիտ աչք իրադրության մեջ, որում տեղի է ունեցել հաղորդակցությունը, արտաբերվել է այս կամ այն միտքը։

խոսքաշարը իրադրության ընդհանուր պատկերացումն ստեղծող միջոցն է, կարելի է ասել՝ խոսքաշարը լեզվական միջոցներով ձևավորված իրադրությունն է:

Խոսքաշարը այն ոլորտն է, որում հանդես եկող բացթողումները թե գրական, թե խոսակցական լեզուներում նմանատիպ են, համընկնում են: Այդ նմանությունը մեծ մասամբ հանգում է լեզվական միավորների շարահյուսական կառուցվածքի ոչ լրիվությանը: Այսպես.

Ա. — Վաղը մեկնում եմ: Բ. — Ես էլ (Ես էլ վաղը մեկնում եմ):

Ա. — Արդեն չորրորդ գիրքն եմ կազմում: Բ. — Ես՝ հինգերորդ (Իսկ ես արդեն կազմում եմ հինգերորդ գիրքը) և այլն:

Նման դեպքերում գործ ունենք այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են թերի նախադասությունները, նախադասության մեջ շարահյուսական տարբեր դեր ունեցող անդամների ղեղումը և այլն: Լեզվաբանական գրականության մեջ այս երևույթները բավականաչափ լավ են ուսումնասիրված, այնպես որ նոր օրինակների դիմելու հարկ չկա:

Այն, ինչ չի բխում խոսքաշարից, չի կարող հաղորդակցության մեջ կատարել իր դերը: Եվ պատահական չէ, որ իմաստային բացթողումներ ունեցող շատ արտահայտություններ ու նախադասություններ խոսքաշարից դուրս կարող են հասկանալի չլինել կամ անհրաժեշտ չափով չհասկացվել:

Օրինակ. Ինչքան հիշում եմ՝ դողս բռնում է: Գառնիում էինք: Ձմեռ: Յուրտ: Ինչ մտավ խելքներս, թե՛ գնանք սառույցի տակից ձուկ հանելու: Ձոր պիտի իջնենք: Հրաժարվեցի: Կեսից ասի՝ գնամ, հասնեմ տղերքին: Ծամփեն կարգին չգիտեմ: Կամաց կամաց գնում եմ: Ոնց եղավ՝ ոտքս մի բանի դիպավ, ու մեկ էլ էն եմ զգում, որ ուղիղ դեպի քարափն եմ գնում: Էհ, ի՞նչ կանես՝ սառույցի նման պնդացած ձյուն ու սղղում է ... Համարյա ոտներս կախվել են քարափից Վերջ, ասի, կորա: Էս մտքի հետ էի, մեկ էլ զգացի, որ ոնց որ ինձ բռնել են. մասրենու մի սառած թուփ էր ... Մի կերպ փաթաթվելով ձգվել եմ ու փորսող դուրս եկել ... Բա, մազ էր մնում ...

Այս խոսքաշարում կան տարբեր կարգի բացթողումներ: Դրանք հիմնականում վերաբերում են բառային կազմին, այսինքն շարահյուսական բացթողումներ են, այդ պատճառով էլ հեշտությամբ կարելի է կոհանել ու վերականգնել դրանք: Իսկ վերջին արտահայտությունը՝ «Մազ էր մնում», որում բացակայում է ոչ թե շարահյուսական որևէ անդամը, այլ հենց բուն միտքը, հասկանալի կարող է լինել միայն խոսքաշարի օգնությամբ, իսկ խոսքաշարից դուրս անհնար կլինի վերականգնել դրա բացթողված մասը, լրացնել ամբողջ միտքը, և լրացնել այնպես, որ

ունենա հենց նույն նշանակութիւնը, որը ենթադրւում է տվյալ խոսքաշարից:

Բ. ՏԵՍՈՂԱԿԱՆ, ԶԳԱՅԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ. — Սա առօրյա խոսքում ամենատարածված ու ակտիվ իրադրութիւնն է: Այս դեպքում արդեն խոսողները գտնվում են հենց այն իրադրութեան մեջ, որում կատարվում է հաղորդակցութիւնը: Եվ անհրաժեշտութիւն չկա պատմելու, նկարագրելու իրադրութիւնը՝ ստեղծելու համար նրա պատկերացումը, որպեսզի հասկանալի լինի ասված արտահայտութեան իմաստը, նշանակութիւնը: Իրադրութեանը վերաբերող, իրադրութիւնից բխող ցանկացած արտահայտութիւն արդեն ինքնին հասկանալի է. դրա համար էլ այն, ինչ տրված, ներկայացված է իրադրութեամբ, բաց է թողնվում, լեզվական միջոցներով չի ձևավորվում:

Եվ ընդհանրապես այն, ինչ շրջապատում է հաղորդակցութեան մասնակիցներին, այն, ինչ նրանք տեսնում են, զգում են, միանգամայն լիարժեք ձևով կարող է փոխարինել խոսքաշարին:

Այս երևույթն ընդգրկում է մարդու զգայական բոլոր օրգանները: Իրադրութիւնը, որ մարդն ընկալում է իր տարբեր զգայարաններով, մտնում է հաղորդակցութեան ոլորտը: Բերենք մի քանի տիպական օրինակներ:

Տեսողութիւն. — (Հեռվում երևում է ինչ-որ դարչնագույն զանգված).

— Մերոնց վրահն է:

— Զէ, ոնց որ մեքենա լինի:

Լսողութիւն. — (Անտառում են: Թփերի խշրտոց է լսվում).

— Այ տղա, արջակեր չղառնանք:

— Էս կողմերում արջ չկա, մի վախեցիր:

Կամ՝ (ինչ-որ թռչունի ձայն է լսվում). Ոնց որ բու է:

Հոտառութիւն. — (Հլուր են գնում: Դեռ միջանցքում մեկը ինչ-որ հոտ է զգում). Լորի է:

Համի զգացողութիւն. — (Հլուրերին բլիթներ են մատուցվում).

— Այ, իսկական իմ ուզածն է:

Ցավի զգացողութիւն. — (Փոքր եղբայրը կատակելու համար ասելով ծակում է եղբոր ուսը):

— Վախ, հո հիմար չես:

Իրադրային (փաստորեն՝ հաղորդակցութեան մասը կազմող հատվածներին) այսպիսի բացթողումները հատկապես տիպական են խոսակցական լեզվին. գրական լեզվում, որը նաև գրավոր հաղորդման նպատակադրութիւն ունի, այս կարգի բացթողումներն անհնարին են: Բայց դա չի նշանակում, թե ընդհանրապես գրական լեզվում բացառվում է

դրանց գոյութիւնը: Ամբողջ հարցն այն է, որ առօրյա խոսքում լրիվ բացթողւած իրադրութիւնը գրական լեզվում անպայմանորեն որոշակի լեզվական դրսևորում է ստանում խոսքաշարի օգնութեամբ (այսինքն՝ որոշ բացթողումներ վերականգնւում են), սակայն հենց այդ խոսքաշարն էլ կարող է լինել իրադրութեան ոչ լրիվ բառային դրսևորումը, այսինքն ունենալ բացթողումներ: Այսպես.

«Ոնց որ բու է» արտահայտութիւնը գրական լեզվում պիտի ներկայացվի խոսքաշարում, որը կարող է լինել բացթողւած իրադրութեան բառային նկարագրութիւնը, ասենք՝ Քալլում էին անտառով, հանկարծ ինչ-որ թռչունի կռնչոց լսվեց: Մեկը ասաց.

— Կարծես բու է:

Գ. Հաղորդակցութեանը նախորդող իրադրութեան իմացութիւն. — Սա տարբերւում է թե խոսքաշարից, թե տեսողական, ղգայական միջավայրից: Այս դեպքում հաղորդակցվելու նպատակով ասված արտահայտութեան նշանակութիւնը պարզ ու հասկանալի է միայն նրանց համար, ովքեր նախապես տեղյակ են հաղորդակցութեան նյութին, թեմային, ծանոթ են հաղորդակցութեանը նախորդող իրադրութեանը:

Բնական է, այսպիսի դեպքերում բացթողումները կարող են արդարացվել միայն այն պայմանով, որ դրանք խոսակիցներին արդեն հայտնի երևութներ են և դրանց լեզվական դրսևորման կարիքը չի զգացվում, առավել կարևոր է դառնում դրանց վերաբերյալ նոր տեղեկութիւնների, տվյալների կամ դրանց հետ առնչվող նոր իրողութիւնների հաղորդումը: Օրինակներ.

(Տղան հանձնում է ավարտական քննութիւնը և «հինգ» ստանալու դեպքում կդառնա մեղալակիր: Հայրը սպասումների մեջ է, երբ որդին դուրս է գալիս).

— Ի՞նչ:

— Հինգ:

Կամ (Գնալու են ծննդյան տոնի, և կինը դեռ նախորդ օրը ամուսնուն խնդրել է ծաղիկներ դնել: Ներս է մտնում ամուսինը).

— Բերեցի՞ր:

— Մեքենայի մեջ են:

Այս կարճ ռեպլիկներից յուրաքանչյուրը բավական ընդարձակ նախադասութեան մի պատառիկն է միայն: Բայց խոսակիցների համար այդ պատառիկն էլ բավական է, որպեսզի հաղորդակցութիւնը կայանա:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ եթե կան նախնական մի քանի իրադրութիւններ, բացթողումները կարող են դառնալ շփոթութեան կամ ասվածք ճիշտ չընկալելու պատճառ:

(Տղան, աշխատանքի գնալիս, իր հետ սովորաբար նախաճաշ է տանում: Այդ օրը հայրը նրան խնդրել է հետը տանել նաև հեռուստացույցի փշացած լամպը՝ նույնից նորը գնելու համար):

— Բա չես տանում:

— Վերցրել եմ:

— Ձէ, լամպը չէ, նախաճաշը:

Միայն վերջին արտահայտությունը, ուր վերականգնված են բացթողված անդամները, ճշգրտում է հաղորդակցության նպատակը:

Ասվածից ակնհայտ է դառնում, որ առօրյա խոսքում բացթողումները սովորական ու տարածված երևույթներ են, մանավանդ՝ իրադրության բացթողումները: Ընդ որում, եթե գրական, գրավոր լեզվում այդպիսի բացթողումները հիմնականում առնչվում են խոսքաշարին, ապա խոսակցական լեզվում դրանք ավելի բազմազան են. մասնավորապես, բացի խոսքաշարից, տարբեր տեսակի բացթողումների դրսևորման միջոցներ են տեսողական, զգայական միջավայրը, նախնական իրադրության իմացությունը և այլն:

Ասենք նաև, որ իրադրության տարբեր տեսակները կարող են պայմանավորել ինչպես բնույթով տարբեր, այնպես էլ նույնանման բացթողումներ: Դա հատկապես երևում է այն բանից, որ նույն արտահայտությունը՝ նույն անդամների բացթողումներով, կարող է լինել տարբեր իրադրությունների արդյունք: Ահա մեկ օրինակ:

Ա. — Քանի՞ մարդ զոհվեց Մեծ հայրենականում:

Բ. — Քսան միլիոն (պատասխան ռեպլիկի բացթողումները բխում են խոսքաշարից): Նույն արտահայտությունը՝ նույն բացթողումներով կարող է պայմանավորված լինել զգայական, տեսողական միջավայրով.

(Հեռուստացույցով ցուցադրում են ֆաշիստների սանձազերծած պատերազմում զոհված մարդկանց):

Ա. — Քսան միլիոն:

Կամ. (Ա-ն գիտի, որ Բ-ն դպրոցում պիտի ճշտիլ իմանա զոհվածների թիվը: Բ-ն գալիս է դպրոցից):

Ա. — Քսան միլիոն (այս դեպքում էլ բացթողումների հիմքը նախնական իրադրության իմացությունն է):

Որոշ բացթողումներ պարզապես կարող են բարդ իրադրությունների արդյունք լինել: Դրանք այն դեպքերն են, երբ հաղորդակցումը կատարվում է տարբեր տեսակի իրադրությունների կամ նույն իրադրության զանազան բաղադրամասերի զուգորդման պայմաններում: Ըստ այդմ էլ, նույն արտահայտության մեջ կարող են լինել տարբեր բնույթի բացթողումներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է հենվել կամ

տարատեսակ իրադրութիւններ ի կամ նույն իրադրութեան տարբեր բաղադրամասերի վրա: Օրինակ.

— Վերցրու, կողքով ես անցնում:

Տվյալ դեպքում խոսքն այն մասին է, թե ով պիտի վերցնի անդորրագիրը էլեկտրականութեան վարձը մուծելու համար. ըստ այդմ էլ բացթողված է անդորրագիր բառը, որ պայմանավորված է այդ առարկայի ներկայութեամբ (այս բացթողումը տեսողական, զգայական իրադրութեան արդյունք է): Միաժամանակ խոսողին հայտնի է, որ խոսակիցը աշխատանքի վայր է գնում այն փողոցով, որի վրա խնայդրամարկըն է. այդ իսկ պատճառով բացթողված է նաև այս իրողութիւնը, որ պայմանավորված է նախնական իրադրութեան իմացութեամբ (փաստորեն, տարբեր իրադրութիւններ տարբեր բացթողումների հիմք հանդիսացան):

Ընդհանրապես բացթողումները կարելի է միավորել երկու հիմնական խմբերում՝ շարահյուսական և իմաստային:

Բոլոր տեսակի շարահյուսական բացթողումները միավորվում են այն ընդհանուր հատկանիշով, որ կարելի է ենթադրել ոչ միայն դրանց իմաստը, այլև շարահյուսական դրսևորումը (պաշտոնը կամ քերականական ձևը): Այդ պատճառով էլ դրանք հեշտութեամբ վերականգնվում են: Այսպես.

Նույն օրը Մուշեղը Մոսկվա գնաց, Վարսիկը՝ Բաքու:

Այս բարդ նախադասութեան երկրորդ բաղադրիչում զեղչված ստորոգյալը ոչ միայն իմաստային կողմով, այլև քերականորեն հեշտ կռահելի է և հեշտութեամբ էլ կարող է վերականգնվել:

Նույնիսկ այն դեպքերում, երբ բացթողվում է նույն իմաստն ունեցող, շարահյուսական նույն դերը կատարող, բայց քերականական ուրիշ ձևավորում պահանջող լեզվական միավորը, դարձյալ դժվար չի լինում ենթադրել համապատասխան քերականական փոփոխութիւնը և, վերականգնման դեպքում, դա իրագործել: Ահա.

Քուրս իսկույն վազեց շուկա, իսկ ես՝ մորս հետից:

Դարձյալ զեղչված է ստորոգյալը, որը արդեն մեկ անգամ գործածված է վազեց ձևով: Բայց առանձնապես ջանք էլ չի պահանջվում կռահելու համար, որ զեղչված է ոչ թե հենց այդ ձևը, այլ՝ վազեցի:

Շարահյուսական բացթողումները մեծ մասամբ կապվում են խոսքի շարահյուսական կառուցվածքի հետ և հանդես են գալիս որպես այս կամ այն շարահյուսական անդամի դերը կատարող միավորների բացակայութիւն: Իսկ բացակայել կամ զեղչվել կարող են նախադասութեան գրեթե բոլոր անդամները՝ թե գլխավոր, թե երկրորդական: Բերենք միայն մի քանի օրինակ:

Գծի պես վազում եմ, ոչ մի բան չեմ ուզում լսեմ (զեղչված է ենթական): Դրանք շատ հարմար են, իսկ սրանք՝ սիրուն (զեղչված է բաղադրյալ ստորոգյալի հանգույցը): Ես քեռուս ծնկներին էի նստել, կատուն՝ իմ (զեղչված են ստորոգյալն ու տեղի պարագան միաժամանակ) և այլն:

Իսկ իմաստային բացթողումները «ազդանշում են միայն իմաստը, բայց թե լեզվական ինչ ձևով պիտի դրսևորվի այդ իմաստը, չի կարելի ասել»⁶:

Դա պայմանավորված է նրանով, որ բացթողված իմաստը թե բառային, թե քերականական տարբեր միջոցներով կարող է արտահայտվել: Եվ, ի տարբերություն շարահյուսական բացթողումների, որոնց վերականգնումը շատ հեշտ էր, և վերականգնվող միավորն էլ սովորաբար ունենում էր իր միակ կամ կայուն ձևը, այսպիսի դեպքերում վերականգնումը կարող է իրագործվել զանազան տարբերակներով: Օրինակ.

(Հայրը դիմում է որդուն).

— Վաղը կիրակի է, ընկերոջդ ասե՞լ ես:

Այս արտահայտության երկրորդ մասը («Ընկերոջդ ասե՞լ ես») հենվում է այն նախնական իրադրության վրա, որ հայրը որդուն խոստացել է կիրակի օրը տանել Գառնի: Որդին խնդրել է, որ ընկերոջն էլ տանեն իրենց հետ. հայրը համաձայն է: Բայց այս ամբողջը բացթողված է: Պարզ է, որ վերականգնման ձևը միակը չէ, կարող են օգտագործվել թե բառային, թե քերականական տարբեր միջոցներ: Ահա մի քանիսը.

Ընկերոջդ ասե՞լ ես, որ համաձայն ենք իրեն էլ մեզ հետ տանելու: Ընկերոջդ ասե՞լ ես, որ ինքն էլ կարող է մեզ հետ գալ: Ընկերոջդ ասե՞լ ես, որ դեմ չեմ, թող գա և այլն:

Սովորաբար բացթողումները լեզվական դրսևորում ստացած միավորներում կարող են ունենալ իրենց ազդանշանները, ցուցիչները, այսինքն, տվյալ արտահայտության մեջ արդեն գործածված լեզվական միավորները որոշակիորեն կարող են հուշել, թե ինչ կարգի բացթողումներ են կատարված:

Այդ երևույթը ցույց տանք միայն ստորոգյալի օրինակով: Ստորոգյալի առկայությունը, բնական է, ամենից առաջ կարող է ազդանշել ենթակալի զեղչումը: Այսպես.

(Սպասում են ավտոբուսի) Ա. Եկավ: (Ա-ն փորձում է նոր զնած

⁶ Е. А. Земская, М. В. Китайгородская, Е. Н. Ширяев. Русская разговорная речь. Общие вопросы. Словообразование. Синтаксис, стр. 193.

շրջազգեստը) Բ. Գեղեցիկ է: (Լուսամուտից նայում են գիշերը տեղացած ձյանը) Ա. Հավում է:

Ստորոգյալը կարող է ազդանշել ոչ միայն հեթակայի, այլև նախադասության մի շարք երկրորդական անդամների ղեղչումը: Դրանք հիմնականում կարող են լինել ստորոգյալի լրացումները՝ խնդիրներ կամ պարագաներ: Բերենք օրինակներ.

(Ա. Յուլյց է տալիս ձեռքի ժամացույցը) Նվեր հմ ստացել: (Հետևապես յուլյցի ձայնը շատ բարձր է) Ա. Ցածրացրու: (Ա. Ստուգում է ճամպրուկի պարունակությունը) Գուպաներս դրե՞լ ես: (Ա.-ն մեկնել է ուրիշ քաղաք՝ գիտածողովի մասնակցելու) Բ. Մասնակցեցի՞ր:

Ճիշտ նույն ձևով նախադասության տարբեր անդամներ կարող են ազդանշել զանազան բացթողումների մասին: Այդ է պատճառը, որ հաճախ հաղորդակցման նպատակով կիրառվող արտահայտությունները կամ լեզվական միավորները բազմապատկեր են լինում միայն որևէ ազդանշանային ցուցիչից, այսինքն բաց են թողնվում մյուս բոլոր անդամները, կիրառվում է միայն այն անդամը, որը կրում է իմաստային ծանրաբեռնվածություն: Այդ ցուցիչ անդամը կարող է լինել հեթական կամ ստորոգյալը, որոշիչը կամ հատկացուցիչը, որևէ խնդիր կամ պարագա և այլն: Ահա այդպիսի մի քանի օրինակներ.

Ա. Ի՞նչ տպավորություն ստացաք ձեր ամառային շրջադասությունից: Բ. Լավ: Ա. Հիմա թագի համար ովքե՞ր են իրար հետ խաղալու: Բ. Կարպովն ու Գասպարովը: Ա. Մեր վերջին քննությունը ե՞րբ է նշանակված: Բ. Երկու օր հետո: Ա. Որ հանրակացարանում աղատ սենյակ չեղավ, որտե՞ղ ես մնալու: Բ. Ստիպված՝ հյուրանոցում և այլն:

Դժվար չէ նկատել, որ այսպիսի բացթողումները հատկապես տարածված են երկխոսություններում, հարցուպատասխանական ռպլիկներում, գնահատողական արտահայտություններում:

* * *

Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկությունները բազմաբնույթ են ու տարատեսակ՝ պայմանավորված ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական հատկանիշներով: Դիտարկված երևույթներն, անշուշտ, չեն սպառում այդ առանձնահատկությունների ողջ բազմազանությունը: Կատարված քննությունը պարզապես մի փորձ է՝ համառոտակի նկարագրելու առօրյա խոսքի կառուցման առավել բնութագրական ու տարածված դեպքերը:

- ԱԱՄ — Ազնավուրը Ազնավուրի մասին, 1976:
- ԱԵԶ — Ս. Ալաջաջյան, Եղեգնեբը չխոնարհվեցին, 1970:
- Ադ. — Ադամյեի, Շիրակ, 1973:
- ԱՃՀ — Ս. Ալվազյան, Ճակատագիրն հայոց, 1967:
- ԱՇ — Ա. Շիրվանզադե, Պատմվածքներ և վիպակներ, 1971:
- ԲԱՄ — Ա. Բակունց, Ալպիական մանուշակ, 1939:
- ԲՀ — Բ. Հովսեփյան, Դու հասկացա՞ր ինձ, 1971:
- ԲԻ — Բ. Ռայնով, Վատ եղանակից լավ բան չկա, 1975:
- Գ — «Գարուն»:
- ԳԹ — «Գրական թերթ»:
- ԳՄ — Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հ. 3, 1975:
- ԵԶ — Ե. Զարենց, Ընտիր երկեր, 1973:
- ԶԽ — Զ. Խալափյան, Մեռնող-հանող, 1975:
- ԶԿԱՄ — Պ. Զեյթունցյան, Կատակերգություն առանց մասնակիցների, 1975:
- ՀԵ — Զ. Լոնդոն, Երկեր, հ. 10, 1970:
- ՀԱ — «Հայաստանի աշխատավորուհի»:
- ՀԺԲ — Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության, 1956:
- ՀԺՀ — Հայ ժողովրդական հերթաթերթ, (Ա. Նազինյանի մշակմամբ), 1967:
- ՀՄ — Հ. Մաթևոսյան, Օգոստոս, 1967:
- ՄԳ — Մ. Գալշոյան, Բովտուն, 1974:
- ՄՆ — Ա. Մորուա, Նովելներ, 1973:
- ՆՄԴ — Կ. Սիմոնյան, Ներսես Մաժան դեղագործը, 1974:
- ՌՀՀ — Ռ. Ռույս, Հմայված հոգին, 1975:
- ՍԳ — «Սովետական գրականություն»:
- ՍԴ — Սասունցի Դավիթ, 1961:
- ՍԽ — Ս. Խանզադյան, Կորած արահետներ, 1964:
- ՍՀ — «Սովետական Հայաստան» (օրաթերթ):
- ՍՀԱ — Հ. Սիրաս, Հայրենի աշխարհ, 1974:
- ՍՎ — Ս. Վարդանյան, Ինչու՞ են թաց նրա աչքերը, 1973:
- ՎԹ — Վ. Թոթովենց, Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա, 1966:
- ՎՊԴԱ — Վ. Պետրոսյան, Դեղատուն «Անի», 1973:
- ԲԵ — Բաֆֆի, Երկեր, 1970: